Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 10-ի նիստի N 34
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից աշխարհում հնագիտական ժառանգությունն արժևորված և պահանջված է որպես հանրային հիշողության և ինքնության ձևավորման կարևոր սկզբնաղբյուր, մշակութային կապիտալի անքակտելի բաղադրատարր: Հնագիտությունը ցանկացած երկրում, ցանկացած հասարակության մեջ որոշակի հասարակական պատվերի կատարող է և այն եզակի գիտական ուղղություններից է, որի դերն ու նշանակությունը սահմանված են միջազգային կոնվենցիաներով, օրենքներով ու օրենսդրական ակտերով:

2. Յուրաքանչյուր հասարակության մշակութային ժառանգության ուսումնասիրման, պահպանության, արժևորման, հանրահռչակման, օգտագործման խնդիրները անհնար է լուծել առանց հնագիտության: Տարեցտարի այս խնդիրները նոր որակներ են ընդունում, նոր չափանիշներով են հանդես գալիս, նոր պահանջներ դնում թե՛ հասարակության և թե՛ գիտության առջև: Թվարկած խնդիրների միացյալ սպեկտրի մեջ շահում է այն երկիրը, այն հասարակությունը, որն իրականացնում է հնագիտական հուշարձանների ուսումնասիրման համապարփակ ծրագրեր և ունի դրանց արդյունքները համակողմանի ներկայացնելուն ու հանրահռչակելուն նպաստող ծառայությունների զարգացած ցանց:

3. Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հնագիտական ժառանգության պահպանությանը, ենթակառուցվածքների զարգացմանը, հանրահռչակմանը, ինչպես նաև երկրի կայուն զարգացման գործընթաց-

ներում հնագիտական ժառանգության՝ որպես տնտեսական ռեսուրսի դիտարկմանը նպաստելը:

4. Ծրագրի նպատակն է նաև ստեղծել Հայաստանում ժամանակակից պահանջները բավարարող հնագիտական ժառանգության հետազոտությունների և հեռանկարային զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, նպաստել միջազգային գիտական համագործակցության ընդլայնմանը, հնագիտական հուշարձանների տարածքների բարեկարգմանը, բացված կառույցների ամրակայման և վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումներով դրանք դարձնել զբոսաշրջության գրավիչ օբյեկտներ:

5. Հայաստանն այսօր հեռանկարային զարգացման գերակայությունների մեջ առանձնահատուկ տեղ է հատկացնում զբոսաշրջությանը՝ նկատի ունենալով հատկապես պատմամշակութային հարուստ ժառանգության առկայությունը երկրում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շարունակական պեղվող հուշարձանները անհամեմատ ավելի գրավիչ օբյեկտներ են, և պեղման ընթացքում հուշարձան այցելելու հնարավորությունը բազմապատկում է զբոսաշրջիկների թիվը:

6. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի **հնագիտական վայրերի պահպանությանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, հանրապետությունում զբոսաշրջային երթուղիների մշակմանը, այդ երթուղիներում հնագիտական հուշարձանների ընդգրկմանը,** Հայաստանի զբոսաշրջային ակտիվ սեզոնի երկարաձգմանը, զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին, ներքին զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև մի շարք համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովմանը:

7. Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի գնահատման և արժևորման ուղղությամբ զգալի քայլեր են կատարվում: Մասնավորապես ուսումնասիրվում է նրա դերն ազգային ինքնության, քաղաքացիական հասարակության և երկրում սոցիալական կապիտալի ձևավորման, խաղաղության, մշակութային բազմազանության պահ-

պանության գործում: Պետական մշակութային քաղաքականությունն իրականացվում է մշակութային միջավայրի, ժառանգված տարածքի բնության, պատմամշակութային արժեքների պահպանման սկզբունքներին համապատասխան: Ներդրված մեխանիզմները հնարավորություն են տալիս ապահովելու կայուն զարգացման գաղափարախոսության հետ ազգային մշակութային առաջնայնությունների արդյունավետ զուգակցումը:

8. Զգալիորեն կարգավորվել են մշակութային ժառանգության պահպանության ինստիտուցիոնալ կառավարման հարցերը, սահմանվել են ոլորտում գործող հաստատությունների ըստ ճյուղերի գործառույթներն ու պարտավորությունները:

9. Ծրագրով, մշակութային ժառանգության քաղաքականությանը համահունչ, հնագիտական ժառանգությունը երկրի կայուն զարգացման գործընթացներում դիտարկվում է որպես տնտեսական ռեսուրս, ուստի դրա իրականացումը կնպաստի նաև սոցիալ-տնտեսական մի շարք խնդրների լուծմանը (մշակված երթուղիների ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովմանը, մարզերի համաչափ տարածքային զարգացմանը):

10. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից զգալի միջոցների հատկացման, միջազգային համատեղ ծրագրերի ընդլայնման, հուշարձանների վերականգնման աշխատանքների ծավալման շնորհիվ հնագիտական ուսումնասիրությունները Հայաստանում աննախադեպ աճ են արձանագրում: Նոր հետազոտությունների արդյունքում թարմացվել ու համալրվել է տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Արտասահմանյան գիտական կենտրոնների օժանդակությամբ իրականացվել են մեծ միջոցներ պահանջող անալիզներ, որոնք որակապես նոր տվյալներ են տալիս հնագույն և հին Հայաստանի պատմության, տնտեսության և մշակույթի ուսումնասիրության համար: Օտար լեզուներով հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ: Նման աշխատանքների շնորհիվ հայ հնագիտությունն այսօր ամուր թելերով ինտեգրվել է միջազգային գիտական կենտրոնների ծրագրերին ու աշխատանքներին: Այդ

ծրագրերի շրջանակներում իրականացվող պեղումների արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության տարածքը (ինչպես և Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը) մարդագոյացման՝ անթրոպոգենեզի, քաղաքակրթության ակունքների, վաղ երկրագործական առաջին հասարակությունների, պետական կազմավորումների, առաջավորասիական էթնոմշակութային համակարգերի ձևավորման կարևորագույն և խիստ ինքնատիպ օջախ է եղել: Ստորին և միջին հին քարի դարի տարաբնույթ հուշարձանների **(Մուրադովո, Քարախաչ, Գորայք, Երևան 1, Լուսակերտ, Նոր Գեղի 1, Հովք, Կալավան, Աղիտու և այլ հնավայրեր**) պեղումների, գտածոների, հումքի աղբյուրների և հին լանդշաֆտի՝ կենսապայմանների ուսումնասիրությունների շնորհիվ վեր են հանվել Հայկական լեռնաշխարհի բնակեցման վաղագույն փուլերի հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները, լեռնաշխարհում բանական մարդու տարածման աշխարհագրական, էկոլոգիական, տնտեսական ասպեկտները, վերին պալեոլիթյան հասարակությունների կենսապահովման համակարգի հիմնական հատկանիշները: Նեոլիթյան և էնեոլիթյան մի շարք բնակատեղիների **(Մասիս բլուր, Առատաշեն, Ակնաշեն, Ն. Գոդեձոր, Արենի 1, Ախթամիր, Ներքին Սասնաշեն)** պեղումների շնորհիվ վեր է հանվել լեռնաշխարհը բնակեցնող վաղ երկրագործական-անասնապահական հասարակությունների՝ մ.թ.ա. VII-IV հազարամյակներով ժամանակագրվող մշակույթների ձևավորման ու զարգացման դինամիկան, լուսաբանվել են տնտեսությանը, հումքային բազային, առևտրին, մշակութային փոխառնչություններին վերաբերող բազմաթիվ հարցեր:

11. Հայոց պատմության նորովի լուսաբանման համար սկզբունքային նշանակություն ունեն **նաև Վանի թագավորության շրջանի, Երվանդյան և Արտաշեսյան հարստությունների Հայաստանի մշակույթների** ժառանգական շարունակականության համապատկերը ներկայացնող հուշարձանների՝ **Էրեբունու, Արամուսի, Երվանդաշատի** մերօրյա ուսումնասիրությունները: Առանձնահատուկ կարևորություն ունեն Արցախի հնագիտական հուշարձանների՝ մասնավորապես

Տիգրանակերտի՝ աննախադեպ ծավալներով, արդյունքներով և հասարակական լայն ընդունելություն գտած ուսումնասիրությունները:

12. Հայաստանի հնագիտական մշակույթների բացահայտման, պարբերացման և ժամանակագրական համակարգի ձևավորման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման, պատմամշակութային միջավայրի ուսումնասիրության համար հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի հին մայրաքաղաքների **(Արմավիր, Արտաշատ, Դվին), Աղձքի հայոց արքաների դամբարանային համալիրի,** բրոնզ-երկաթե դարերի **(Հոռոմ, Գեղարոտ, Շենգավիթ, Ներքին Նավեր, Վերին Նավեր, Լոռի բերդ, Քարաշամբ, Կարմիր բլուր և այլն)**, Երվանդյան, Արտաշեսյան դարաշրջանների **(Ծաղկահովիտ, Բենիամին, Հողմիկ)** խոշոր առևտրատնտեսական, մշակութային կենտրոնների և դամբարանադաշտերի պեղումները: Այս ուսումնասիրությունները զուգակցվում են հնաերկրաբանական, հնաաշխարհագրական, հնէաբանական, հնակլիմայաբանական հետազոտություններով, արխեոմետրիկ և բիոմետրիկ անալիզներով, որոնք հնարավորություն են տալիս գիտության ժամանակակից պահանջներին համապատասխան՝ վերականգնել և ուսումնասիրել հնագույն և հին Հայաստանի բնակեցման համակարգի, բնաշխարհի յուրացման և տարածքի կազմակերպման կառուցվածքի առանձնահատկությունները:

13. Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների շնորհիվ մշակվել են պարբերացման և ժամանակագրության նոր համակարգեր, որոնք օգտագործվում են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլև հարևան շրջանների հնագույն մշակույթների զարգացման դինամիկան ներկայացնելու համար: **Նոր Գեղի 1, Արենի 1, Առատաշենի** հնավայրերի պեղումների արդյունքների հետ կապված գիտական և հասարակական լայն արձագանքները վկայում են, որ հայաստանյան հնագիտությունը միջազգային ճանաչում է ստանում:

14. Հնագիտական հետազոտություններին զուգահեռ հավաքվել, վերծանվել և մեկնաբանվել են Հայկական լեռնաշխարհի և գաղթօջախների հարյուրավոր վիմագիր արձանագրություններ: Հնագիտության և վիմագրագիտության ոլորտնե-

րում հնագիտության ինստիտուտի գիտական ուսումնասիրությունների արդյունքներն իրենց արտացոլումն են գտել **«Հնագիտական պեղումները Հայաստանում»**՝ 23 հատոր, **«Հայաստանի հնագիտական հուշարձանները»**՝ 20 հատոր, **«Դիվան հայ վիմագրության»**՝ 9 հատոր մատենաշարերում և բազմաթիվ մենագրություններում:

15.***Հնագիտական ժառանգության պահպանությանն ուղղված գործընթացների ծրագրավորումը, կազմակերպումը, ֆինանսավորումը***

Ներկայում Հայաստանի Հանրապետության տարածքում գտվող հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունները և հնագիտական համալիր հետազոտական ծրագրերն իրականացնում են **ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն», «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ները, «Էթնոս»** հասարակական կազմակերպությունը, **«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ը:** Պեղման աշխատանքներին իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանների մշակութային արժեքների պահպանության հիմնադրամը, «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունը, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, Ասիական զարգացման բանկը՝ «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի շրջանակներում և այլն:

16. Հայաստանի Հանրապետության տարածքում հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների թույլտվության, նպատակահարմարության, արդյունավետության խնդիրները քննարկող և գիտամեթոդական եզրակացություններ տվող խորհրդակցական մարմին հանդիսանում է **Հայաստանի**

Հանրապետության մշակույթի նախարարությանը կից գործող միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովը (ձևավորվել է 1999 թվականին):

17. Հանձնաժողովի խնդիրներն ու գործառույթներն են՝ հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների վերաբերյալ գիտական հաշվետվությունների, նյութերի, փաստաթղթերի և տեղեկությունների ստացումն ու քննարկումը, պեղումների ու գիտահետազոտական ծրագրերի, նախագծերի և նպատակային աշխատանքների քննարկումն ու դրանց իրականացման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան եզրակացություն տալը, պեղումների կատարման թույլտվության վերաբերյալ եզրակացություն տալը, պեղումների ծրագրերի ու աշխատանքների համակարգված իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա շահագրգիռ իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ համագործակցության ապահովումը:

18. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացնում առաջարկություններ Հայաստանի Հանրապետության օտարերկրյա պետությունների տարածքներում գտնվող վտանգված հայկական հուշարձանների պահպանման միջոցառումների իրականացման, ինչպես նաև դրանց հետախուզման, հնագիտական պեղումների և ֆինանսավորման վերաբերյալ:

19. 2010-2016 թթ. միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալու 360 հայտ, համապատասխանաբար՝ 2010 թ.՝ 36, 2011 թ.՝ 51, 2012 թ.՝ 60, 2013 թ.՝ 62, 2014 թ.՝ 66, 2015 թ.՝ 46, 2016 թ.՝ 39՝ հայտ:

20. 2014-2015 թվականներին պեղումներ իրականացվեցին հրատապ ուսումնասիրման կարիք ունեցող, համապատասխանաբար, 5 և 4 հուշարձանում, ընդ որում 2014 թվականին պեղված հուշարձաններից 5-ում, իսկ 2015 թվականին՝ 3-ում կատարված աշխատանքներն արդեն իրականացվեցին որպես վերականգնման համար պարտադիր նախնական փուլ:

21. 2009 թվականից ՀՀ պետական բյուջեում **«Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում»** ծրագրի շրջանակներում, իրականացվում է նաև հուշարձանների հետախուզման և պեղման աշխատանքներ: Պետական բյուջեի հատկացումներով պատմության և մշակույթի հուշարձանների ուսումնասիրման, պեղման, նախագծման և վերականգնողական աշխատանքների առումով 2004-2017 թթ. իրականացվել և իրականացվում են բազմաթիվ ծրագրեր (Լոռի բերդ, Լճաշենի ամրոց, Շիրակամուտի 7-րդ դարի եկեղեցի, Դաշտադեմի ամրոց, Եղվարդի Սբ Աստվածածին, Չիչխանավանք, Քոբայրավանք, Բջնի, Թեժառույք, Տեղ գյուղի Սբ Աստվածածին եկեղեցի և այլն):

22. Վերջին տարիներին մշակութային զբոսաշրջության ընտրված ուղի է Հայկական լեռնաշխարհում պատմականորեն ձևավորված հարավային առանցքի կամ միջանցքի ուղղությունը: ՀՀ կառավարությունը կարևորելով երկրում զբոսաշրջության զարգացումը՝ ընդունել է հարավային ուղղության զարգացմանը միտված մի շարք ծրագրեր.

1) 2011 թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց կառավարական հանձնաժողով և նշվեց պատմական **Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման 2200-ամյակը:** Միջոցառումների և քննարկումների արդյունքում որոշվեց հանրահռչակել Արտաշատ մայրաքաղաքի պեղման վերաբերյալ ստացված պատմական նյութերը և դարձնել առավել մատչելի լայն հասարակության համար: Արտաշատի պահպանության, օգտագործման և հետագա հանրահռչակման նպատակով ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 25-ի N 11 նիստի արձանագրությամբ («ՀՀ Արարատի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին») նախատեսվել է «**Արտաշատ մայրաքաղաք» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ստեղծումը (մինչև 2020 թ.):** Արգելոցի հիմնադրումը կարևորվում է հայ ժողովրդի պետականության պատմության նշանավոր հուշարձանի մշակութային շերտերի անխաթար պահպանության, պեղումների ընթացքը վերահսկելու, հուշարձանի պեղված հատվածների ամրակայումն ու վերականգնումն իրականացնելու, զբոսա-

շրջիկներին և այցելուներին սպասարկման ծառայություններ մատուցելու, զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման առումով: Արգելոց-թանգարանի տարածքի համար առաջարկվում է տրամադրել մոտ 80,0 հա տարածք, այդ թվում՝ Խոր վիրապի վանական համալիրի հարավ և հարավ-արևմտյան մասում գտնվող տարածքները, Արաքս գետի ձախափնյա՝ ներկայում պեղվող հատվածը, նկատի ունենալով, որ Խոր վիրապի վանական համալիրին կից հողատարածքը կազմում է պատմական մայրաքաղաքի բուն տարածքը:

2) Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 10 մլն դրամ է հատկացվել հարավային ուղու վրա գտնվող **«Դվին» հնավայրի** պեղումների և պեղավայրի ամրակայման աշխատանքների, 2016 թ.՝ 1.5 մլն նախագծային աշխատանքների, իսկ 2017 թ.՝ 11 մլն. 245 հազ. շինարարական աշխատանքների իրականացման համար:

3) Ներկայում Տեղական տնտեսության և զբոսաշրջության **ենթակառուցվածքի զարգացման ծրագրի (ՏՏԶԵԶԾ)** շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող **«Հարավային միջանցք»** ծրագրում ընդգրկված **«Արտաշատ մայրաքաղաք» հնավայրը (**նկատի ունենալով հնավայրի համաշխարհային պատմական, գիտական և մշակութային բացառիկությունը և դրա՝ որպես երթուղում քաղաքային հնագույն մշակույթ ներկայացնող եզակի լինելը) կդառնա զբոսաշրջային երթուղու կարևոր նշակետերից մեկը: Ծրագրի նախնական փուլում առաջարկվել է նախատեսել Խոր վիրապին մոտ բարձունքներից մեկում դիտակետի ստեղծում, ինչը հուշարձանի այցելուներին հնարավորություն կտա հեռվից տեսնելու սահմանային գոտում գտնվող պատմական մայրաքաղաքի տարածքը, բացված հնագիտական շերտերը: Նախատեսվում է դիտակետի տարածքում ստեղծել պայմաններ մայրաքաղաքի տարածքից գտնված հնագիտական նյութերի ցուցադրություն կազմակերպելու համար: Ծրագրում ընդգրկվել է **Դվին հնավայրի թանգարանացման և հարակից տարածքների բարեկարգման, ինչպես**

նաև «Զորաց քարեր» հուշարձանի մերձակա տարածքում զբոսաշրջային գոտու ստեղծման բաղադրիչները:

23. Հայաստանի հնագիտական ուսումնասիրության բազային օբյեկտների պեղումները և գիտահետազոտական աշխատանքները հիմնականում ֆինանսավորվում են (պեղումներ, լաբորատոր անալիզներ, նյութերի մշակում և հրատարակություն) ՀՀ պետական բյուջեից՝ գիտական և գիտատեխնիկական բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերով հատկացված միջոցներով կամ պեղվող կոնկրետ օբյեկտի համար տրամադրված ֆինանսավորմամբ: Հողահատկացման, տնտեսվարման պատճառով վտանգված հնավայրերը պեղվում են տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված գումարներով: Զգալի թիվ են կազմում նաև միջազգային դրամաշնորհներով, արտերկրի գիտական հաստատությունների օժանդակությամբ կատարվող պեղումներն ու ուսումնասիրությունները:

II. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

24. Ներկա աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններում առաջացել են մարտահրավերներ՝ բնագավառի կայուն և բնականոն զարգացման համար: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ներկայում գլոբալ մարտահրավեր է մշակույթը որպես տնտեսական ռեսուրսի դիտարկման բացակայությունը կամ նվազ մակարդակը, համաշխարհային մշակութային ժառանգության բազմազան և հարուստ շտեմարանում հայկական մշակույթի ներկայացվածության պակասը, ինչի արդյունքում պատշաճ մակարդակի վրա չէ հայկական մշակույթի տեսանելիությունը:

25. Հայաստանի Հանրապետության հնագիտական հուշարձանների զգալի մասն այսօր վտանգված է բնածին գործոնների քայքայիչ ազդեցության, տարածքի խիտ բնակեցման, տնտեսական գործունեության, հողօգտագործման և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով: Մշակութային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է տնտեսական կամ այլ բնույթի գործունեության հետևանքով վտանգ-

ված կամ անխուսափելի կործանման ենթակա հուշարձանների դաշտային հետազոտությունների իրականացումն է: Վերջին տարիներին լուրջ խնդիր է հնագիտական հուշարձանների պահպանության բնագավառում արձանագրված իրավախախտումները՝ հատկապես գանձագողությունը:

26. Հայաստանում հնագետ մասնագետների անբավարար քանակը միշտ էլ օրակարգի հարց է եղել: Հնագիտության ոլորտը նոր կադրերով համալրելը ներկայիս անհետաձգելի հրամայականներից է: Հապաղելու դեպքում կուտակված գործնական գիտելիքներն ու հմտությունները երիտասարդ կադրերին փոխանցելը, բնականոն սերնդափոխության հարցերը մոտ ապագայում կվերածվեն դժվար լուծելի կամ անլուծելի խնդրի:

27. Կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներին մասնակցում են մի շարք ուսումնական և գիտական հաստատություններ՝ մասնավորապես **Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետը, ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը** և այլն: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում իր գործունեությունն է սկսել **«Պատանի հնագետ» դպրոցը**, որի նպատակն է դպրոցական տարիքից բարձրացնել հնագիտական ժառանգության արժեքի նկատմամբ հանրային իրազեկման աստիճանը՝ անցյալը հասկանալու, ինչպես նաև այդ ժառանգությանն սպառնացող վտանգները կանխելու համար:

28. Պատմամշակութային ժառանգության բնագավառի վերջին տասնամյակների ձեռքբերումներն ամրապնդելու և հեռանկարային զարգացումն ապահովելու համար առաջնահերթ և լուծում պահանջող **խնդիրներից կարևորվում են.**

1) հնագիտական հուշարձանների պահպանության, հանրահռչակման և օգտագործման համալիր միջոցառումների իրականացման,

2) հնագիտական հիմնարար հետազոտությունների զարգացման, հուշարձանների պեղման, պեղվող հուշարձանների ամրակայման և վերականգնման,

3) հնագիտական գտածոների լաբորատոր հետազոտությունների իրականացման, վերականգնման, մասնագիտական խնամքը ապահովելու նպատակով անհրաժեշտ ենթակառույցների ստեղծման,

4) հնագիտական հուշարձանների և գտածոների թվայնացման, քարտեզագրման,

5) հուշարձանակիր տարածքների թանգարանացման, մշակութային զբոսաշրջության զարգացման ծրագրերի մշակման,

6) հնագիտական հուշարձանների պահպանության բնագավառում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, բնագավառի գիտական կազմակերպությունների և բուհերի, ինչպես նաև միջազգային կառույցների հետ ակտիվ ու արդյունավետ համագործակցության արմատավորման,

7) հնագիտական ուսումնասիրությունները գիտության ժամանակակից պահանջներին բավարարող մակարդակով կազմակերպման,

8) հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման,

9) պատմամշակութային ժառանգության բնագավառի կադրերի վերապատրաստման,

10) միջազգային համագործակցության ընդլայնման և մշակութային ժառանգության միջազգայնացման, հնագիտական պեղումների արդյունքների հանրահռչակման, ենթակառուցվածքների բարեկարգման հարցերը:

Ծրագրի նպատակն է բազմաբովանդակ միջոցառումների միջոցով հնարավորինս լուծել բնագավառում առկա խնդիրներն, որոնք հիմք կհանդիսանան հետագա միջոցառումների և ծրագրերի համար:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

29. ***Հնագիտական ժառանգության պահպանությունը, բարեկարգումը, հանրահռչակումը՝ զբոսաշրջությանն ուղղված առաջնահերթ միջոցառումների համապատասխան***

1) Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են տարբեր տիպերի ու ժամանակաշրջանների (մ.թ.ա. V հազարամյակից մ.թ. XVIII դար) հնագիտական հուշարձանների պահպանությանը, հանրահռչակմանն ու օգտագործմանն ուղղված միջոցառումները: Ծրագրում ընդգրկված հնագիտական հուշարձաններն առավել ամբողջական պատկերացում են տալիս հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի մշակութային միջավայրի շարունակական զարգացման, քաղաքակրթական արժեքների ձևավորման և արմատավորման, տարբեր ժամանակափուլերում լեռնաշխարհի հասարակությունների հոգևոր և նյութական մշակույթի, տնտեսության, կենցաղի վերաբերյալ: Հուշարձանների ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել նաև վերջինների կապը բնաշխարհագրական միջավայրի հետ, տեղադրությունը, ուսումնասիրվածության և պահպանվածության աստիճանը, զբոսաշրջության կազմակերպման հնարավորությունները:

2) Ծրագիրը մշակելիս հաշվի է առվել այն հանգամանքը, որ հնագիտական ժառանգության և պատմամշակութային միջավայրի պահպանության ու հանրահռչակման աշխատանքների իրականացումն ապահովելու համար հիմնարար նշանակություն ունեն՝

ա. հնագիտական հուշարձանների կառավարման բարելավումը, ենթակառուցվածքների զարգացումը,

բ. նպատակային ծրագրերի մշակումը և դրանց կիրարկումը,

գ. կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացը,

դ. նոր տնտեսական հնարավորությունների ակտիվ օգտագործումը սոցիալ-տնտեսական զարգացման համար,

ե. ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնումը:

30. Ծրագրում հուշարձաններն ընդգրկվել են՝ նկատի ունենալով հետևյալ չափորոշիչները.

1) բոլոր կարևորագույն պատմական ժամանակահատվածները հաջորդաբար ներկայացնելու հնարավորությունը,

2) հուշարձանների տարածքները՝ կապը ներկա վարչատարածքային միավորների հետ,

3) տարբեր բնույթի հուշարձանների առկայությունը՝ բնակատեղի/քաղաքատեղի (այդ թվում՝ հին մայրաքաղաքները), պաշտամունքային կառույցներ, մշակութային լանդշաֆտ և այլն,

4) հուշարձանների գիտական ուսումնասիրությունները՝ որպես զբոսաշրջային ծրագրերի իրականացման ներուժ:

31. Ծրագրում ընդգրկված հուշարձանները՝ ըստ տիպերի և ժամանակագրության

Քարայրներ՝		
	Արենի-1 քարայր (Թռչունների քարայր)	մ.թ.ա. V-IV հազ., պղնձե-քարե դար /էնեոլիթ/
Ժայռապատկերներ՝		
	Սյունիքի ժայռապատկերներ	մ.թ.ա. V-IV հազ. պղնձե-քարե դար /էնեոլիթ/-բրոնզի դար
Քաղաքատեղիներ (այդ թվում՝ հին մայրաքաղաքներ)՝		
	Շենգավիթ քաղաքատեղի	մ.թ.ա. XXIX - XXV դդ. (վաղ բրոնզե դար)
	«Մեծամոր» քաղաքատեղի	մ.թ.ա. IV հազ.– մ.թ. XVIII դ. (վաղ, միջին, ուշ բրոնզե դարեր, վաղ երկաթե դար, Վանի թագավորության դարաշրջան, ուշ միջնադար)
	Լճաշենի բերդշեն	Ք.ա. III հազ.-ից Ք.ա. VII դ. ընկած ժամանակաշրջան (վաղ, միջին և ուշ բրոնզե դարեր, վաղ երկաթե դար, Վանի թագա-

		վորության դարաշրջան)
	«Զորաց քարեր» հնավայր	Մ.թ.ա. II հազ. – I հազ. (միջին բրոնզե և վաղ երկաթե դարեր, անտիկ դարաշրջան, միջնադար)
	Կարմիր բլուր՝ Թեյշեբաինի քաղաքատեղի և դամբարանադաշտ	Հիմնադրվել է Ք.ա. 685 թ. Ռուսա Բ արքայի կողմից և հարատևել է մինչև Ք.ա. 585 թ.: Եղել է Վանի թագավորության փոխարքայի նստավայրը:
	Բենիամինի անտիկ դաստա-կերտ	**Մ.թ.ա. 5- մ.թ. 1-ին դար (անտիկ դարաշրջան)**
	Հին Արտաշատ մայրաքաղաք	Մ.թ.ա. V հազ.- մ.թ. IV դ. մայրաքաղաքը հիմնադրվել է մ. թ. ա. 189–160 թթ., ավերվել՝ 368/369 թ. (պղնձե-քարե դարեր /էնեոլիթ/, Վանի թագավորու-թյան դարաշրջան, անտիկ դարաշրջան, վաղ միջնադար)
	Դվին մայրաքաղաք	Մ.թ.ա. III հազ.- մ.թ. XIII դ Հիմնադրվել է IV դ. 30-ական թվականներին, 428 թվականին դարձել է մարզպանական Հայաստանի կենտրոն, ավերվել է 1225 թվականին (վաղ բրոնզե, վաղ երկաթե դարեր, անտիկ դարաշրջան, վաղ և զարգացած միջնադար)
Դամբարանադաշտեր՝		
	Թալինի վաղ բրոնզե դարի դամբարան (ծիսական հարթակ)	մ.թ.ա. IV հազ. (վաղ բրոնզե դար)
	Ներքին և Վերին Նավեր դամբարանադաշտեր	մ.թ.ա. XXIII-XV դդ. (միջին բրոնզե դար)
	Քարաշամբի դամբարանադաշտ	մ.թ.ա. XXII – XI դդ. (միջին և ուշ բրոնզե դարեր, վաղ երկաթե

		դար)
	Լոռի բերդի արքայական դամ-բարաններ	մ.թ.ա. VIII – մ.թ.ա. VI դդ. (Վանի թագավորության դարաշրջան)
	Աղձք: Հայոց արքաների դամբարան	359-364 թթ. (վաղ միջնադար)

Ծրագրով նախատեսված միջոցառումները

32. Արենի-1 քարայրի (Թռչունների քարայր) պահպանության, կոնսերվաց-ման և թանգարանացման ծրագիր

Հուշարձանն ուսումնասիրվում է 2007 թվականից: Մ.թ.ա. V հազ. երկրորդ կես IV հազ. առաջին կեսով թվագրվող Արենի 1 քարայրի տարբեր շերտերով ներկայացված է տարածաշրջանի էնեոլիթյան դարաշրջանի ուշ փուլի մի ինքնատիպ մշակույթ, որն առաջին անգամ է փաստագրվում ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ հարևան շրջաններում: Հնավայրում փաստագրվել է աշխարհի հնագույն գինու արտադրության մի համալիր, ինչը հուշարձանին համաշխարհային մեծ համբավ է բերել: Այստեղից հայտնաբերված առարկաների մի ստվար մասը բացառիկ է և իր զուգահեռները չունի համաշխարհային պրակտիկայում: Հուշարձանն առանձնանում է իր դիտարժանությամբ և ընդհանուր դիրքի տեսարժանությամբ, ինչի արդյունքում կարող է դառնալ Հայաստանի ամենահայտնի և ամենից շատ այցելվող հնագիտական հուշարձաններից մեկը:

1) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ԱՄՆ դեսպանատան դրամաշնորհով 2017-2018 թթ. նույն դրամաշնորհի շրջանակներում կիրականացվեն պեղումների ժամանակ բացված կավակերտ կառուցվածքների ամրակայման, անցուղիների պատրաստման աշխատանքները (ֆինանսավորման ծավալը՝ շուրջ ինը միլիոն դրամ):

33. Ժայռապատկերների քարտեզագրում, թվայնացում, ուսումնասիրության արդյունքների հրատարակություն

1) Սյունիքի, Ջերմուկի, Վարդենիսի, Գեղամա լեռներում արձանագրված ժայռապատկերները զբոսաշրջության տեսակետից ՀՀ տարածքի առավել հեռանկարային հուշարձանախմբերն են, որոնք ֆինանսական փոքր ներդրումների և պատշաճ պահպանության կազմակերպման դեպքում կարող են դառնալ մշակութային, էկոլոգիական զբոսաշրջության առանցքային օբյեկտներ: Վերջիններս մշակութային ինքնատիպ լանդշաֆտ ձևավորող տարածքների ծավալներով և քանակով, թեմատիկ խմբերի, պատկերների բազմազանությամբ աննախադեպ են ողջ աշխարհի մակարդակով: Հայ-գերմանական համատեղ արշավախումբը **2012-2014 թթ.** լայնածավալ փաստագրման աշխատանքներ է կատարել Սյունիքի ժայռապատկերների հայտնաբերման, վավերագրման, տվյալների շտեմարանի ստեղծման և համալիր ուսումնասիրություն կազմակերպելու ուղղություններով: Հետազոտական աշխատանքները կենտրոնացվել են **Նազելի և Սեպասար** հրաբուխների տարածքում: Պարբերաբար հետախուզական աշխատանքները ցույց են տալիս, որ ժայռապատկերներն իրենց միջավայրով կարող են դիտարկվել որպես «սրբազան լանդշաֆտի» վաղագույն դրսևորում:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Սաքսոնիա-Անհալթի Հուշարձանների պահպանության վարչությունը հրատարակության համար սեփական միջոցներով արդեն սկսել է նյութի մշակումը: Ներկայում փաստագրված ժայռապատկերները լուսանկարի և գծանկարի միջոցով միասնական թվայնացվում են, որպեսզի հետագայում նյութը ներկայացվի որպես կատալոգ: Այս մեթոդով արդեն մշակվել է շուրջ 1.500 ժայռապատկեր:

բ. Աշխատանքների երկրորդ փուլում՝ 2016-2017 թթ. ընթացքում, ամբողջ նյութը պատրաստ կլինի հրատարակության, որից հետո այն հայ-բրիտանական արշավախմբի կողմից ուսումնասիրվող Ուխտասարի ժայռապատկերների հետ կներկայացվի Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի հաստատմանը՝

փոխանցելու Կազմակերպության Համաշխարհային ժառանգության կենտրոն ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում գրանցվելու նպատակով:

գ. Այս աշխատանքներին նպաստելու համար անհրաժեշտ է իրականացնել տարածքի տոպոհանույթ և սահմանել պահպանական գոտի:

34. Շենգավիթ քաղաքատեղիի պեղման, բարեկարգման և ամրակայման ծրագիր

1) Շենգավթի տարածքն արգելոց է՝ իր փոքրիկ, փայտաշեն թանգարանով, որը Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի հնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի կազմում է: 1936-1938 և 1958-1983 թթ. հուշարձանի տարածքում պեղումներ են իրականացրել ՀՀ գիտությունների ակադեմիայի, Հայաստանի պատմության թանգարանի և Երևանի պետական համալսարանի արշավախմբերը: 2000 թ. մինչ օրս ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արշավախումբը շարունակում է հնավայրի պեղումները: 2008-2014 թթ. Շենգավթի համալիր ուսումնասիրություններն իրականացվել են ՀՀ գիտության կոմիտեի նպատակային հետազոտությունների պետական ծրագրի շրջանակում: Պեղումները վկայում են, որ բնակատեղին հիմնվել է Ք.ա. IV-III հազարամյակների սահմանագլխին և գոյատևել մինչև Ք.ա. XXVII-XXV դդ.:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Շենգավիթը այն եզակի հնավայրերից է, որի տարածքի բարեկարգման, բացված կառույցների ամրակայման շնորհիվ հնարավորություն կստեղծվի պատշաճ մակարդակով ներկայացնելու վաղ բրոնզե դարի բարեկեցիկ մի հանրություն՝ ապրելակերպի, մշակութային կապերի, հոգևոր պատկերացումների, ծիսական արարողությունների համապատկերում:

բ. Անհրաժեշտ է ավարտել տաճարական համալիրի պեղումները, համակող-մանի ուսումնասիրել գտածոները, ապա ամրակայել և պահպանել պեղված

տաճարական համալիրը՝ դրան մերձակա կառույցները՝ դարձնելով զբոսաշրջության և հայ հին մշակույթի ցուցադրության ինքնատիպ մի օջախ:

35. «Մեծամոր» հնավայրի ուսումնասիրություն, պահպանության պայմանների բարելավում և թանգարանի ցուցադրության արդիականացում

1) Հնավայրը պեղվում է 1965 թվականից մինչ օրս: Բացված մշակութային շերտերը վկայում են, որ Մեծամորը բնակեցված է եղել էնեոլիթից մինչև ուշ միջնադար: Բրոնզե դարում (մ.թ.ա. IV-II հազ.) Մեծամորը առևտրական, արհեստագործական և տնտեսական նշանակալի կենտրոն էր, որը զբաղեցնում էր ավելի քան 10 հա տարածք: Մեծամորի դամբարանադաշտում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոները վկայում են, որ Մեծամորը հնագույն ժամանակներից ի վեր եղել է առևտրական ճանապարհների խաչմերուկ: «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացվել է 1968 թ.: Ներկայում այն գործում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում և ունի ավելի քան 27 հազար թանգարանային առարկա:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ.

ա. Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանի պահպանության խնդիրների մեջ առաջնահերթ է հուշարձանի պահպանական գոտու լրիվ սահմանազատման և ամբողջական պահպանական ցանկապատի կառուցման խնդիրը: Հուշարձանն առավել դիտարժան ու ներկայանալի դարձնելու համար անհրաժեշտ է պեղված հատվածների (և հատկապես սրբարանների, աստղադիտարման հարթակի, մետաղի արտադրական կառույցների, քաղաքային թաղամասի, սենյակների, կացարանների, որմնահեցերով պարիսպների և դանբարանադաշտի առավել կարևոր հատվածի՝ իշխանական դամբարանների) գիտական նախագծերի կազմում, վերականգնման աշխատանքների իրականացում և արդի մեթոդներով ամրակայում:

բ. Հուշարձանից հայտնաբերված եզակի հնագիտական նյութերի պահպանումը, անվտանգությունն ու անխաթար վիճակն ապահովելու համար անհրաժեշտ է արգելոց-թանգարանի շենքի հիմնանորոգում՝ ջրահեռացման, օդափոխության (հատկապես ոսկու եզակի զետեղարանում), ջեռուցման, հակահրդեհային, ձայնաազդանշանային և անվտանգության արդի այլ անհրաժեշտ համակարգերի տեղադրում:

գ. Առաջնահերթ է Տարոնիկ գյուղից դեպի «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը տանող 1,5 կմ ճանապարհի ասֆալտապատումը, ինչը միանգամից կնպաստի դեպի Մեծամոր տուրիստական այցելությունների քանակի կտրուկ ավելացմանը:

դ. Շատ կարևոր է հուշարձանի տարածքում արդիական և էկոլոգիապես անվտանգ սանհանգույցների, ինչպես նաև սպասարկման ենթակառուցվածքների կազմակերպումը: Այս առումով առավել նպատակահարմար է հուշարձանի տարածքում գտնվող և XVIII դ. վերաբերող հին ջրաղացի վերականգնման աշխատանքների իրականացումը: Ժամանակին այստեղ է տեղավորված եղել Մեծամոր թանգարանի հին ցուցադրությունը: Ջրաղացի վերանորոգումը, վերականգնումը և ուշ միջնադարին հատուկ նրա ինտերիերի ու էքստերիերի ձևավորումը հնարավորություն կտան կառույցը վերածելու ինքնատիպ հանգստա-սենյակ-ցուցասրահի, որտեղ զբոսաշրջիկները կարող են և՛ ծանոթանալ Մեծամորի ուշմիջնադարյան իրողություններին, և՛ համտեսել այդ շրջանին բնորոշ ուտեստներ:

ե. Անհրաժեշտ է նաև դեպի հնավայր տանող հարմարավետ, անվտանգ, հուշարձանի արտաքին տեսքը չխաթարող ու պատմաճարտարապետական կառույց-ները չվնասող երթուղու մշակում և կառուցում: Դա հնարավորություն կտա զբոսա-շրջիկներին առավել ամբողջական ու ակնառու ծանոթանալ եզակի հնագիտական հուշարձանին:

36. Լճաշենի ամրոց-քաղաքատեղիի պեղման և վերականգնման ծրագիր

1) Լճաշենի ամրոց-քաղաքատեղին ՀՀ Գեղարքունիքի մարզում է, Լճաշեն գյուղից մոտ 400 մ հարավ-արևելք, Սևան-Գավառ ճանապարհի աջ կողմում: Լճաշեն գյուղից արևելք և ամրոց-բնակատեղիից հյուսիս ու արևելք՝ լճի մակարդակի իջեցման հետևանքով ջրից ազատված տարածքներում տարածվում են դամբարանները: Գյուղի արևելյան եզրին՝ Սևան-Գավառ նախկին ավտոճանապարհի ձախ կողմում, քարաժայռի վրա փորագրված է Արգիշտի I սեպագիր արձանագրությունը՝ Կիեխունի քաղաքի երկիրը նվաճելու և Իշտիկունի քաղաքի երկիրը հասնելու մասին: Քաղաքատեղին կազմված է երեք մասից. արևելյան հատված՝ 2 միջնաբերդով, կենտրոնական հատված՝ 1 միջնաբերդով և արևմտյան հատված՝ 3 միջնաբերդով: Արտաքին պարսպապատերը հյուսիսից անցնում են ափամերձ հարթությունից բարձրացող հրվանդանների թեք լանջերի և ուղղագիծ ժայռերի եզրագծով, արևելքից, արևմուտքից և հարավից՝ բլրաձև և հրվանդանաձև բարձունքների մեծ թեքություն ունեցող լանջերի եզրերով, որոնք հատկապես արևմտյան հատվածում գրեթե ուղղաձիգ քարակարկառներ են՝ ընդգրկելով 17,45 հա տարածք: Հուշարձանի զբաղեցրած ամբողջ տարածքում այժմ էլ նկատելի են սենյակների ու կառույցների, պարիսպների և հենապատերի մնացորդներ, ինչից կարելի է եզրակացնել, որ այն ունեցել է բավական խիտ կառուցապատում: Լճաշենի ամրոց-քաղաքատեղին և դամբարանադաշտը պարբերաբար ուսումնասիրվել և պեղվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության պետական թանգարանի արշավախմբի կողմից 1956-1973 թթ.՝ Հ. Մնացականյանի ղեկավարությամբ: 1960-ական թթ. ամրոց-քաղաքատեղին մանրամասն ուսումնասիրել է Գ. Միքայելյանը: 2004-2006 թթ. բերդշենը հետազոտել է հայ-իտալական արշավախումբը (ղեկավարներ՝ Ս. Հմայակյան, Ռ. Բիշիոնե, ճարտարապետ՝ Հ. Սանամյան): Հուշարձանի տարածքում հայտնաբերված հնագիտական նյութերի թվագրման համաձայն, այն բնակեցված է եղել վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադար, բազմադարյան գոյության ընթացքում զբաղեցնելով տարբեր տարածքներ, բնակատեղիից վերածվելով ամրոցի, ամրոց-բնակատեղիի, բերդշենի, ամրոց-քաղաքատեղիի, գյուղատեղիի:

2) Հուշարձանում մինչ այժմ կատարված վերականգնման աշխատանքները

ա 2008 թ. կազմվել է բերդշենի կենտրոնական միջնաբերդի մասնակի վերա-կանգնման և ամրակայման նախագիծը՝ 6 000 000 դրամ գումարով (պետ. բյուջ. ֆինանս.):

բ. 2009 թ. միջնաբերդի հյուսիսային՝ մուտքերի միջև գտնվող հատվածի պեղման աշխատանքներ՝ 4 000 000 դրամ գումարով (պետ. բյուջ. ֆինանս.):

գ. Միջնաբերդի հյուսիսային՝ մուտքերի միջև գտնվող հատվածի մասնակի վերականգնման և ամրակայման շինարարական աշխատանքներ՝ 16 929 000 դրամ գումարով (պետ. բյուջ. ֆինանս.):

3) Կենտրոնական միջնաբերդի վերականգնումն ավարտելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները.

ա. պեղման աշխատանքներ.

բ. մասնակի վերականգնման և ամրակայման նախագծի լրամշակման աշխատանքներ.

գ. մասնակի վերականգնման և ամրակայման շինարարական աշխատանքներ.

դ. Աշխատանքները, կախված տարեկան ֆինանսավորման ծավալներից, կարող են կատարվել 3-5 տարվա ընթացքում:

37. «Զորաց քարեր» հնավայրի համակողմանի ուսումնասիրություն, պահպանության պայմանների բարելավում և արգելոցի տարածքում թանգարանի կառուցում

1) Սյունիքի բրոնզեդարյան հուշարձանների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում Սիսիան քաղաքից և Շաքի գյուղից մոտ 3 կմ հեռավորության վրա գտնվող, Հին Մերձավոր Արևելքի միջին բրոնզ-երկաթե դարաշրջանների (մ.թ.ա. XXXV-VII/VI դդ.) համար կարևորագույն դեր ունեցող «Զորաց քարեր» հնավայրը, որը տեղաբնակներն անվանում են «Դիք քարեր» (կամ «Դիք-դիք քարեր»), «Ցից քարեր» (կամ «Ցից-ցից քարեր»), իսկ ավելի շատ այն հայտնի է նաև «Ղոշուն-դաշ», «Զորա-քարեր», «Խոսող քարեր», վերջերս նաև՝ «Քարահունջ» անվանումներով: Նկատի ունենալով հուշարձանի բացառիկ դերն ու կարևորությունը՝ ՀՀ կառավարության

2009 թ. հունիսի 26-ի թիվ 853-Ն որոշմամբ Զորաց քարերին տրվել է արգելոցի կարգավիճակ:

2) Հնավայրի ուսումնասիրության և պահպանության խնդիրներն են՝

ա. Զորաց քարերը 1980-1990-ական թթ. ոչ մեծ ծավալով ուսումնասիրել և պեղել է հնագետ Օ. Խնկիկյանը: Նյութերը հանձնվել են Սիսիանի երկրագիտական թանգարանին: 2000-ական թթ. հուշարձանի տարածքում պեղումներ և ուսումնասիրություններ չեն իրականացվել: Միայն 2013 թ. ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե ներկայացրած և վերջինիս հավանությունն ու օժանդակությունը ստացած նպատակային ծրագրով վերստին սկսվել են Զորաց քարերի պեղման և ուսումնասիրության աշխատանքները: Այդ ծրագրով «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին տարեկան կտրվածքով տրամադրվում է 3.0 մլն դրամ, որով իրականացվում են ոչ միայն հուշարձանի պեղման և բացված տեղամասերի ծածկման, այլ նաև հուշարձանին վերաբերող նյութերի հավաքման, մշակման, պեղված տարածքի չափագրման, տեղանքի հանույթի հանման, հայտնաբերված հնագիտական արժեքների վերականգնման ու ամրակայման աշխատանքները:

բ. Հուշարձանի պահպանության հետ կապված առաջնահեևթ խնդիր է նաև «Զորաց քարեր» պատմամշակութային արգելոցի պահպանական գոտու վերջնական ճշգրտումը, հնավայրը կազմող պարսպապատ բնակավայրի և դամբարանացաշտի, ինչպես նաև հարակից տարածքների պատմամշակութային համայնապատկերի ամբողջացումը:

3) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Նախատեսվում է կատարել անհրաժեշտ ծավալով պեղումներ, հայտնաբերված նյութն իմաստավորելու, գրանցելու, ուսումնասիրելու և հետպեղումային բոլոր հրատապ աշխատանքներն իրականացնելու համար: Դրա համար, մոտավոր հաշվարկով տարեկան կպահանջվի **40.0 մլն** ՀՀ դրամ՝ ներառյալ նաև

արշավախմբի անդամների գործուղումները, ճարտարապետական չափագրումները, լուսանկարահանումներն և այլ անհրաժեշտ աշխատանքները:

բ. նախատեսվում է նաև հուշարձանի ընդհանուր տարածքի (ներառյալ և՛ բնակատեղին, և՛ դամբարանադաշտը), ամենամյա պեղվող քառակուսիների և հայտնաբերված նյութերի ֆոտոֆիքսման, վեր բարձրացող սարքերով հուշարձանի ընդհանուր տարածքի տեսաֆիքսման, հուշարձանի հանույթի վրա համակարգչային 3D ծառայությունների իրականացման, գծանկարման, հուշարձանի փաստավա-վերագրման և վերականգնման աշխատանքների կազմակերպում.

4) հնավայրի հանրահռչակման համար անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծումը՝

ա. Երևան-Սիսիան-Գորիս մայրուղուց դեպի հուշարձան տանող ճանապարհի ասֆալտապատում: Դա կազմում է շուրջ 3,5 կմ ճանապարհ, որից մոտ 1,0 կմ-ն անմիջապես դեպի հուշարձան տանող գրունտային, անհարթ, վթարավտանգ ճանապարհն է: Ճանապարհի այդ հատվածի (մոտ 1,0 կմ) ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար նախնական հաշվարկով կպահանջվի **37,0 մլն** ՀՀ դրամ: Ճանապարհի ասֆալտապատումը հնարավորություն կընձեռի բազմաթիվ տուրիստական կազմակերպությունների մեքենաներով հնարավորինս մոտենալ հուշարձանին և կանգնել կայանատեղիում:

բ. Հուշարձանը դիտարժան, մատչելի և ճանաչողական դարձնելու համար առաջնահերթ է անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում.

գ. Հուշարձանն անխաթար պահելու համար անհրաժեշտ է պահպանական գոտու 53 հա տարածքի ամբողջական ցանկապատում: Այդ աշխատանքների համար մոտավոր հաշվարկով կպահանջվի շուրջ **28,0 մլն** ՀՀ դրամ:

դ. Երթևեկությունը կարգավորելու և տուրիստական ավտոբուսների երթերը կանոնավորելու համար անհրաժեշտ է հուշարձանի պահպանական գոտու մուտքի մոտ մեքենաների կայանատեղիի կառուցում, որի իրականացման համար նախնական հաշվարկով անհրաժեշտ է **35,0 մլն** ՀՀ դրամ:

ե. Արագորեն աճող տուրիստական երթերի (հատկապես Իրանից եկող) ու անհատ այցելուների պատշաճ սպասարկման և հուշարձանի մասին հիմնավոր ու գիտական տեղեկատվություն ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է հուշարձանի պահպանական գոտու սահմաններում թանգարանի երկհարկանի շենքի կառուցում: Աշխատանքների իրականացումը կկազմի **185,0 մլն** ՀՀ դրամ:

զ. Հուշարձանի պահպանական գոտու մերձակայքում, թանգարանի շենքից ոչ հեռու, պարտադիր է նաև սպասարկման ենթակառուցվածքների՝ խանութների, հանգստասրահի, զովացուցիչ ջրերի և հյութերի կրպակների, բուկլետների և հուշանվերների, ինչպես նար տեղական գյուղատնտեսական մթերքների արդիական տաղավարների տեղադրում: Այս աշխատանքների ֆինանսական բաղադրիչը կկազմի **22,0 մլն** ՀՀ դրամ:

է. Թանգարանի և նրա շուրջը ստեղծվելիք սպասարկման ենթակառուցվածքների անխափան գործունեության համար անհրաժեշտ է հասարակական սանհանգույցների կառուցում, էլեկտրականության, ջրագծի, կոյուղու, գազի անցկացում և անխափան գործարկում: Աշխատանքների իրականացումը կկազմի **40,0 մլն** ՀՀ դրամ:

ը. Այցելությունների և էքսկուրսիաների ժամանակ հուշարձանին հնարավորինս վնաս չհասցնելու նպատակով անհրաժեշտ է դեպի նրա տարբեր հատվածները տանող արդյունավետ երթուղիների մշակում և այդ հատվածներում վերգետնյա անցուղիների տեղադրում: Դրա ստեղծման համար կպահանջվի **15,0 մլն** ՀՀ դրամ:

թ. Քանի որ հուշարձանը գտնվում է զբոսաշրջային, առևտրական և տնտեսական բանուկ ճանապարհների խաչմերուկում, նպատակահարմար է նրան կից ուսումնատեղեկատվական կենտրոնի կառուցումը, ինչը թույլ կտա ապակենտրոնացնել առանց այն էլ Երևանում՝ հանրապետության կենտրոնում, տեղակայված և ոչ լրիվ արդյունավետությամբ գործող զբոսաշրջային և կրթական կազմակերպությունների ցանցը, հնարավորություն կստեղծի հուշարձանի տարածքում կազմակերպել պատմամշակութային գործնական

պարապմունքներ անցկացնող ու ոլորտին առնչվող հիմնախնդիրներ քննարկող ամառային դպրոց-ճամբար, զարկ կտա հայկական պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ գիտական տեղեկատվության հետագա զարգացմանը և հնարավորություն կընձեռի ոլորտի երիտասարդ, բանիմաց մասնագետների որակական հատկանիշների բարձրացմանը: Ուսումնատեղեկատվական կենտրոնի ստեղծումը կնպաստի նաև Հայաստանի հարավային սահմանների և Արցախի պատմամշակութային հուշարձանների հանրահռչակմանն ու տուրիստական երթուղիների մեջ առավել ներգրավմանը: Տեղեկատվական կենտրոնի կազմակերպման համար նախնական հաշվարկով կպահանջվի **50,0 մլն** ՀՀ դրամ:

ժ. «Զորաց քարեր» հնավայրի տարածքում անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքների իրականացման համար, ընդհանուր առմամբ, կպահանջվի **412,0 մլն** ՀՀ դրամ: Այս ծրագրի ֆինանսավորմամբ հնավայրը կարճ ժամանակում կդառնա տարածաշրջանի ամենից շատ այցելվող մեգալիթյան եզակի հուշարձանը:

5) Ներկայում Տեղական տնտեսության և զբոսաշրջության **ենթակառուց-վածքի զարգացման ծրագրի (ՏՏԶԵԶԾ)** շրջանակներում Համաշխարհային բանկի դրամաշնորհով իրականացվում են նախագծման աշխատանքները:

38. Կարմիր բլուր քաղաքատեղիի և դամբարանադաշտի պեղման, ամրակայման և թանգարանացման ծրագիր

1**)** Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում, Հրազդան գետի ձախ ափին է Կարմիր բլուր հնավայրը, որը Ք.ա. VII դ. 1-ին կեսին հիմնել է Ռուսա Բ-ն (685- 645 թթ.): Այն նվիրված է եղել ուրարտական հզոր աստվածներից երկրորդին՝ ռազմի և ամպրոպի աստված Թեյշեբային: Կարմիր բլուրի կանոնավոր պեղումները 1939-1974 թթ. իրականացրել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և Լենինգրադի Պետական Էրմիտաժի միացյալ հնագիտական արշավախումբը: Պեղումների արդյունքում հայտնաբերվել է՝ քաղաքաշինական ինքնատիպ պատկեր, արվեստի և

մշակույթի բացառիկ գործեր, ծիսական և կիրառական զենքեր՝ վահաններ, սաղավարտներ, կապարճներ, պերճանքի առարկաներ և այլն: Թեյշեբաինին համարվում է Հին Աշխարհի կենտրոններից մեկը, և պատահական չէ, որ **այն ընդգրկված է աշխարհի 100 կարևորագույն հուշարձանների ցանկում**: Երկարատև ընդմիջումից հետո Կարմիր բլուրի պեղումները վերսկսվեցին 2013 թ.: Երևան քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարության ազդեցության գոտում եղած տարածքի հետազոտման արդյունքում հայտնաբերվեց Թեյշեբաինի քաղաքի դամբարանադաշտը, որտեղ 2015 թ. իրականացվել են համատարած պեղումներ: Ճանապարհի շինարարության հետևանքով Կարմիր բլուրի դամբարանադաշտի վտանգված գոտին ունի 26 մ լայնություն և 190 մ երկարություն, այսինքն՝ շուրջ 5000 քմ մակերես: Այս ողջ տարածքում Ք.ա. VII-VI դդ. կատարվել են միմյանց հպված, բացառիկ խտությամբ դասավորված հարյուրավոր թաղումներ:Պեղումներին զուգահեռ իրականացվում են դամբարանների չափագրումները, լուսանկարումը, տեսանկարահանումը, օդային լուսանկարումը, մարդաբանական բնորոշումները, դամբարաններից հայտնաբերված գտածոների և մարդկանց ու կենդանիների ոսկորների գրանցումը և պահեստավորումը:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Խիստ արժեքավոր է մարդաբանական նյութը: Ընդամենը մեկ ամսում պեղված դամբարաններում հայտնաբերվել է շուրջ 50 մարդու թաղում: Գիտական մեծ արժեք ունենալով այն ստեղծում է խնդիրներ, քանզի խիստ դժվարացնում է դամբարանների պեղումները: Միմյանց վրա դասավորված այս կմախքները պեղելու համար պահանջվում են շաբաթներ: Սա չնախատեսված, սակայն ռեալ իրողություն է, որն անպայման պետք է հաշվի առնել: **Ըստ նախնական հաշվարկների՝ պեղումների ավարտից հետո մենք կունենանք առնվազն 5000 հնագիտական առարկա և ավելի քան 2-3 հազար կմախք:** Սա հսկայական հարստություն է, որը միաժամանակ երկարատև և լարված աշխատանք է ակնկալում, պահանջում է կարճ ժամկետում պեղել հինգ հարյուրից ավելի դամբարան, վերականգնել և

թանգարանային ցուցադրության վիճակի բերել գտածոները: Դա պահանջում է **արմատապես վերափոխել և ժամանակակից տեխնիկական միջոցներով համալրել կենտրոնի հնագիտական գտածոների վերականգնման լաբորատորիան:**

բ. Առաջիկայում անհրաժեշտ է նախատեսել նոր պահեստարան-սենյակների պահարաններ՝ ակնկալվող պեղածո վիթխարի նյութը կանոնակարգելու, պահպանելու, ապա վերականգնելու և ցուցադրության նախապատրաստելու համար:

գ. Մյուս կարևորագույն խնդիրը պեղածո մարդաբանական նյութի պահպանությունն է: Հանրահայտ է, որ Հայաստանում չկա մարդաբանության թանգարան: Մինչդեռ հայտնաբերված մեծաքանակ մարդաբանական նյութը, որը նախնական հաշվարկների համաձայն, կարող է հասնել մի քանի հազարի, բացառիկ հնարավորություն է ստեղծում անդրադառնալու հայ ժողովրդի ծագումնաբանությանը, Վանի թագավորության հյուսիսային մայրաքաղաքի՝ Թեյշեբանիի բնակչության կազմին, ԴՆԹ տարրալուծումների միջոցով նրանց էթնիկ պատկանելության խնդիրներին: Այդ նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գիտահետազոտական կենտրոնի մասնաշենքում մարդաբանական նյութի հետազոտման լաբորատորիայի ստեղծման և փորձանմուշները պահպանելու համար:

դ. Մյուս կարևոր խնդիրը միջնաբերդի և քաղաքային թաղամասերի բարեկարգման և ամրակայման աշխատանքներն են: Ժամանակի ընթացքում կավակերտ կառույցները՝ մասնավորապես միջնաբերդի պարիսպը և պալատական կառույցը, որոնք հայտնաբերվել են նախկին պեղումների արդյունքում, հողմահարվում են և ավերվում: Հրատապ է հուշարձանի քայքայումը կանխող միջոցառումների իրականացումը, հուշարձանի տարածքում թանգարանի արդիականացումը և տեղում հայտնաբերված գտածոների ցուցահանդեսի կազմակերպումը:

39. Բենիամինի անտիկ դաստակերտի հնագիտական ուսումնասիրության և թանգարանացման ծրագիր

1) **Ծրագրի համառոտ նկարագրությունը**

ա. Բենիամինի անտիկ հուշարձանում պեղվել են պալատական, պաշտամունքային, բնակելի և տնտեսական համալիրներ և շուրջ 250 դամբարաններ:

Հուշարձանն ունի միջազգային նշանակություն, և 1998 թվականից պեղումներն ընթանում են ֆրանսիացի հնագետների հետ համատեղ:

բ. Նախատեսվում են կոնսերվացնել հուշարձանի մոնումենտալ կառույցները, տեղում ստեղծել թանգարան և հնագիտական բազա, ուսումնասիրվող հուշարձան և թանգարան համալիրը վերածել գիտական, ուսումնական և տուրիստական միջազգային կենտրոնի, որը հնարավորություն կունենա կազմակերպել հնագիտական արշավախմբեր, ընդունել ուսանողներ, մասնագետներ և տուրիստներ: Ստեղծել հուշարձանի և հայտնաբերված նյութերի համակարգչային բանկ և կատալոգ, այն տպագրել և թողարկել ինտերնետային էջով:

2) Ենթածրագրի նպատակները

ա. Կոնսերվացնել և վերականգնել հուշարձանի մոնումենտալ կառույցները: Կառուցել հնագիտական բազա և թանգարանի շենք: Կազմակերպել հնագիտական արշավախմբեր:

բ. Ընդլայնել մշակութային և գիտական փոխհամագործակցությունը տեղի և արտերկրի գիտական, մշակութային և ուսումնական կենտրոնների հետ: Նպաստել հայ մշակույթի ինտեգրմանը համաշխարհային մշակութային համակարգին:

գ. Կազմակերպել մշակութային տուրիզմ և համապատասխան վճարովի ծառայություններ:

3) Անհրաժեշտ միջոցառումներ

ա. Հուշարձանի տարածքում ստեղծել հայտնաբերված նյութերի մշակման և ցուցադրության համար անհրաժեշտ պայմաններ:

բ. Ուսումնասիրվող հուշարձան և թանգարան համալիրները վերածել գիտական, ուսումնական և տուրիստական միջազգային կենտրոնի, որը հնարավորություն կունենա կազմակերպել և ընդունել հնագիտական արշավախմբեր, մասնագետներ և ուսանողներ:

գ. Ստեղծել հուշարձանի և հայտնաբերված նյութերի տվյալների համակարգչային բանկ և կատալոգ, այն ինտերնետային էջի միջոցով հասու դարձնել միջազգային գիտական, համալսարանական, մշակութային կենտրոններին և տուրիստական գործակալություններին:

4) **Ակնկալվող արդյունքը** ծրագրի հիմնական ոլորտների՝ մշակութային, գիտական, ուսումնական, սոցիալական և կոմերցիոն, արդյունավետության հանրագումարն է: Ոլորտներից յուրաքանչյուրի արդյունավետության գնահատման համար կիրառելի են առանձին չափանիշեր:

ա. հնագիտական բազայի ստեղծում,

բ. հուշարձանի մոնումենտալ կառույցների կոնսերվացիա,

գ. նոր թանգարանի ստեղծում,

դ. անտիկ ժամանակաշրջանի պատմության, մշակույթի և արվեստի ուսումնասիրության գործընթացում թանգարանների դերի մեծացում,

ե. թանգարանների զարգացման նոր հնարավորություններ և հավաքածուների հարստացում,

զ. տեղեկատվության բարձր մակարդակ, հին հայկական պատմամշակութային հարուստ ժառանգության, նյութական և հոգևոր մշակույթի քարոզչության նոր հնարավորություններ, է միջազգային կապերի և փոխհամագործակցության ընդլայնում:

5) Արդյունքները

ա. Հուշարձանի ընդգրկում զբոսաշրջային երթուղիներում,

բ. մշակութային տուրիզմի պահանջները բավարարող ենթակառուցվածքների ստեղծումը,

գ. զբոսաշրջիկների մասնակցություն հնագիտական պեղումներին, տուրիզմի զարգացում:

6) Գնահատման չափանիշեր են՝

ա. զբոսաշրջային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի թիվը,

բ. զբոսաշրջիկների և այցելուների թիվը,

գ. զբոսաշրջությունից գոյացած ֆինանսական մուտքերի աճը:

40. Հին Արտաշատ մայրաքաղաքի պեղման և ամրակայման գիտանախագծային աշխատանքներ

1) 2011 թ. ՀՀ վարչապետի ղեկավարությամբ ստեղծվեց կառավարական հանձնաժողով և մեծ շուքով նշվեց Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման 2200-ամյակը: Միջոցառումների և քննարկումների արդյունքում որոշվեց հանրահռչակել Արտաշատ մայրաքաղաքի պեղման վերաբերյալ ստացված պատմական նյութերը և դարձնել առավել մատչելի լայն հասարակության համար: Դեռևս խորհրդային տարիներին մեծ ծավալի պեղումներ են իրականացվել պատմական Արտաշատ մայրաքաղաքի տարածքում, որոնք սկսվել են 1970 թվականից և շարունակվում են մինչ օրս: Քաղաքի միջնաբերդը և կենտրոնական թաղամասերը գտնվում են Խորվիրապի բլրախումբը կազմող բլուրների վրա, իսկ նրանց առջև՝ հարթավայրում, դեպի հյուսիսարևելք և հարավ տարածվել են քաղաքային մյուս թաղամասերը: Պեղումներով պարզվել է, որ Արտաշատի տեղում դեռևս մ.թ.ա. V հազարամյակում եղել է բնակավայր: Բացվել են նաև մ.թ.ա. XII-X դարերով թվագրվող ընդարձակ բնակատեղիի մնացորդներ: Պեղումներով բացահայտվեց նաև, որ Արտաշատը կառուցվել է Վանի թագավորության շրջանի քաղաքի տեղում, որի միջնաբերդը բացվել է 2-րդ բլրի վրա:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պեղումների արդյունքում բացվում է հնադարյան քաղաքը, արդեն անհրաժեշտություն է առաջացել այն ներառել զբոսաշրջության երթուղում: Նկատի ունենալով պեղված մակերեսների մասշտաբները՝ նպատակահարմար է Արտաշատի բացված թաղամասերի, համակառույցների ամ-

ռակայման և տարածքի բարեկարգման աշխատանքներն իրականացնել փուլ առ փուլ:

41. «Դվին» պատմական քաղաքատեղի հնավայրի ուսումնասիրություն, պահպանության պայմանների բարելավում և թանգարանի կազմակերպում

1) Միջնադարյան Հայաստանի Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին, Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Այգեստան գյուղերի տարածքներում, Երևանից մոտ 35 կմ հարավ-արևելք, ընդգրկում են մոտ 400 հա տարածք: Այն համարվում է հին և միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Հիմնադրել է հայոց Խոսրով Կոտակ թագավորը (332-338) IV դարի 30-ական թթ.: 11-րդ դարի վերջին և 12-րդ դարի սկզբին Դվինը հետզհետե կորցրել է իր դերը, որին նպաստել են Դվինի արհեստավորների ու վաճառականների Անի տեղափոխվելը, ինչպես նաև օտար ցեղերի ու հարևան իշխանությունների հաճախակի ասպատակություններն ու ավերումները: Քաղաքը վերջնականապես կործանվել է Ջալալ էդ Դինի արշավանքների հետևանքով (1225 թ.):

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ.

2014 թ. թողարկված նախագծա -նախահաշվային փաստաթղթի համաձայն 2015-2016 թթ. ընթացքում նախատեսվում է ավարտել «Դվին» հնավայրի ճեմուղի-ների սալապատման, թանգարանային մասի նորոգման, միջնաբերդի մուտքի ձևավորման և ամրակայման աշխատանքները: Սակայն Դվին քաղաքատեղիի պեղ-ված հատվածներում (պալատական կառույցներ, Սուրբ Կաթողիկե եկեղեցու, աշխարհիկ, տնտեսական շինություններ և կացարաններ) նորոգման, վերա-կանգնման և ամրակայման աշխատանքներ իրականացնելու նպատակով անհրա-ժեշտ է կազմել վերը նշված կառույցների նախագծա -նախահաշվային փաստա-թղթերը՝ առաջիկա տասը տարիների ընթացքում վերականգնման աշխատանքներ կատարելու համար: Ներկայում Տեղական տնտեսության և զբոսաշրջության

ենթակառուցվածքի զարգացման ծրագրի (ՏՏԶԵԶԾ) շրջանակներում Համաշխարհային բանկի դրամաշնորհով իրականացվում են նախագծման աշխատանքները:

42. Թալինի վաղ բրոնզե դարի ծիսական հարթակի ամրակայման և ցանկապատման ծրագիր

1**)** Թալինի դամբարանադաշտի պեղումները սկսվել են 1985 թվականից և շարունակվել մինչև 1991 թվականը: Հնավայրում պեղումներ են կատարվել նաև 2013 թվականին՝ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ծրագրով: Պեղված հնագիտական օբյեկտների մեջ առանձնանում է վաղ բրոնզե դարին վերաբերող «ծիսական հարթակը»: Մ.թ.ա. IV հազարամյակի վերջին քառորդով թվագրվող այս կառույցը վաղ բրոնզե դարի շենգավիթյան մշակույթի բացառիկ հուշարձան է: Կովկասից մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը ձգվող շենգավիթյան /կուր-արաքսյան/ մշակույթի տարածման սահմաններում նման հնագիտական օբյեկտ մինչ օրս չի արձանագրվել: Բնակավայրից դուրս կառուցված՝ էքստրավերտ ծիսական կառույցի եզակի նմուշ է: Դամբարանադաշտի տարածքում գտնվելու հանգամանքը վկայում է այն մասին, որ ծիսական այս հարթակում կատարված արարողությունները կապ են ունեցել թաղման ծեսի հետ: Հուշարձանը պեղելուց հետո ծածկվել է հողով (2013 թվականին այստեղ կատարվող պեղումների ընթացքում նորից այն ծածկվել է հողաշերտով՝ հուշարձանի քայքայման գործընթացը կանգնեցնելու նպատակով): Հուշարձանը գտնվում է Երևան-Գյումրի մայրուղուց Թալին մտնող ճանապարհի եզրին (Թալին տանող ճանապարհի շինարարության ժամանակ ծիսական հարթակի հյուսիս-արևմտյան մասը ավերվել է) և ցանկացած պահի կարող է քանդվել:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

Մ.թ.ա. IV հազարամյակի այս եզակի կառույցը կորստից փրկելու և հանրությանը ցուցադրելու համար հարկ է ամրակայել հարթակը, պատերը և ցանկապատել տարածքը: Թալինի դամբանադաշտում արդեն ունենք մեկ ցանկապատված դամբարան: Այցելություններ կազմակերպելու համար բարենպաստ տեղադրություն ունեցող Թալինի «ծիսական հարթակի» ցանկապատմամբ այստեղ կունե-

նանք մ.թ.ա. IV հազ. հասարակության պաշտամունքի ու թաղման ծեսի մասին բացառիկ վկայություններ տվող և ինքնատիպ կառուցվածք ունեցող խիստ դիտարժան մի հուշարձան:

43. Պեղումներ և ամրակայման աշխատանքներ Ներքին և Վերին Նավեր դամբարանադաշտերում

1) Տարածաշրջանի միջին և ուշ բրոնզե դարերի մշակույթները ներկայացնող հնավայրերի շարքում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն Ներքին և Վերին Նավեր դամբարանադաշտերը (ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի և Փարպի գյուղի վարչական տարածքներ): Սրանց մեջ հատկապես առանձնանում է Վերին Նավերի մեծ դամբանաբլուրը (Ք.ա. XVI-XV դդ., տրամագիծը՝ 50 մ, դամբանասրահի երկ.՝ 17 մ, լայնքը՝ 3 մ):

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. լայնածավալ պեղումների իրականացում Ներքին և Վերին Նավեր դամբարանադաշտերում,

բ. գտածոների վերականգնում և համալիր հետազոտում,

գ. արևմուտքի հեղինակավոր լաբորատորիաներում փորձանմուշների տարրալուծում,

դ. կատարված աշխատանքների միջազգայնացում՝ դասախոսությունների և զեկուցումների կազմակերպում արևմուտքի հեղինակավոր կենտրոններում,

ե. անգլերենով մենագրության հրատարակում:

զ. հեռանկարում՝ Փարպի գյուղի հողատարածքում, նորակառույց ճանապարհի հարևանությամբ կառուցել **Հայոց պետականությանը նվիրված թանգարան,** որտեղ պետք է ներառվեն բրոնզե դարի՝ Վերին և Ներքին Նավեր դամբարանադաշտերի և վաղ միջնադարի՝ Աղձքի արքայական դամբարանի գտածոները: Այս թանգարանը և ամրակայված հուշարձանները դարձնել Հայաստանում զբոսաշրջության կենտրոններից մեկը:

44. Քարաշամբի դամբարանադաշտի պեղումների, ուսումնասիրության և կոնսերվացման-թանգարանացման ծրագիր

1) Դամբարանադաշտը գտնվում է Լուսակերտ և Քարաշամբ գյուղերի միջև՝ Հրազդանի կիրճի առափնյա հողատարածքների վրա: Հուշարձանում լայնածավալ պեղումներ են իրականացվել 1980-ական թվականներին /պեղվել է շուրջ 1070 դամբարան/: Ներկայում պահպանվել են դամբարանադաշտի երկու հատվածները, որոնցից մեկը մոտ 3,3 հա զբաղեցնող տարածքով գտնվում է բնակավայրի կենտրոնում և բոլոր կողմերից շրջապատված է շինություններով: Նման պայմաններում դամբարանադաշտի հետագա պահպանությունը գործնականում հնարավոր է միայն հնավայրի թանգարանացման ճանապարհով: 2009 թվականից պահպանական նպատակներով վերսկսված պեղումների շնորհիվ ներկայում հնավայրի տարածքում պեղվել է 11300 քառ. մ մակերեսով տարածք, որտեղ բացվել է 700 դամբարան, որոնցից պեղվել է 452-ը:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Դամբարանների խտությունը եզակի հնարավորություն է ստեղծում ֆինանսական ոչ մեծ ծախսեր կատարելով՝ կոնսերվացնել և թանգարանացնել (անգամ եթե այն ընդգրկի պեղված հատվածների 20- 30 տոկոսը) ոչ թե առանձին դամբարաններ, այլ հարյուրավոր թաղումներով հատվածներ:

բ. Հնավայրի թանգարանացմամբ Հայաստանում կունենանք զբոսաշրջության խիստ գրավիչ մի կենտրոն ևս: Դրան նպաստելու են նաև մայրաքաղաքին մոտ լինելը, Հրազդանի գեղատեսիլ կիրճը, բարվոք ճանապարհը, բարեկարգ բնակավայրերի առկայությունը:

45. Լոռի բերդի արքայական դամբարանների ամրակայման, ցանկապատման ենթածրագիր

1) Լոռի բերդը Հայաստանի բրոնզե և երկաթե դարաշրջանների նշանավոր հուշարձաններից է: Ընդարձակ դամբարանադաշտից և բնակավայրից բաղկացած այս հնավայրը գտնվում է Ստեփանավան քաղաքի հարևանությամբ, Լոռի բերդ

գյուղի տարածքում՝ Զորագետ և Ուռուտ գետերի միախառնման վայրում: 1969 թվականից մինչ օրս շարունակվող պեղումների շնորհիվ բացվել են մ.թ.ա. III հազարամյակի վերջերից մինչև մ.թ.ա. VI-V դդ. ժամանակահատվածն ընդգրկող 111 դամբարաններ: Տարածաշրջանի միակ հուշարձանն է, որտեղ հասարակության վերնախավի թաղումներ են կատարվել մ.թ.ա. III հազարամյակի վերջերից մինչև մ.թ.ա. VI դարը: Քարաշար ընդարձակ դամբարանասրահների քանակով, թանկարժեք մետաղից պատրաստված զարդերով, Հին Արևելքի դեկորատիվ-կիրառական արվեստի եզակի նմուշներ հանդիսացող գեղարվեստական մետաղի, բրոնզե քանդակի բարձրարժեք նմուշներով այս հուշարձանը տվյալներ է տալիս լեռնաշխարհի էլիտայի և էլիտար մշակույթի մասին ավելի քան 1500 տարի ընդգրկող ժամանակահատվածի համար: Սրանց մեջ թաղման կառույցների մոնումենտալությամբ հատկապես առանձնանում են մ.թ.ա. VIII-VI դարերով թվագրվող «արքայական դամբարանները», որոնք գեղարվեստական բարձրարժեք նյութերի տեսականու բազմազանությամբ և առատությամբ համաժամանակյա զուգահեռը չունեն ոչ միայն Հայկական լեռնաշխարհում, այլև ողջ առաջավոր Ասիայում:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ

ա. Դամբարանները գտնվում են ներկայում գործող ճանապարհի եզրին և վտանգված են: Դրանց ցանկապատման ծրագրի առկայության դեպքում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներով կմաքրի այդ դամբարանների թաղման կառույցները:

բ. Նշված աշխատանքներից հետո կարելի կլինի ամրակայել դամբարանների քարաշար պատերը և ցանկապատել դրանք: Ցանկապատման ենթակա տարածքը կազմում է 100x70 մ և 25x25 մ:

46. Աղձք: Հայոց արքաների դամբարանների հետազոտում և թանգարանացում

1) Աղձքի արքայական դամբարանը մեզ հասած վաղ միջնադարյան միակ հուշարձանն է, որն ունի հստակ թվագրում՝ ըստ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի վկայությունների կառուցվել է 359-364 թթ. միջակայքում, հայ-պարսկական պատերազմի եռուն շրջանում: Այն ունի համազգային բացառիկ արժեք և հայոց պետականության ամենազդեցիկ իրեղեն վկայություններից է: Բացի այդ, Աղձքի եկեղեցին հայ քրիստոնեական ճարտարապետության ինքնատիպ և հնագույն շինություններից է, որի պեղումները և համապարփակ ուսումնասիրումը կարող է նոր լույս սփռել ոչ միայն հայ, այլև համայն քրիստոնեական ճարտարապետության ակունքների վրա: Աղձքի արքայական դամբարանը, որպես միջնադարի վաղագույն կառույց, իր վրա է բևեռել մի շարք նշանավոր հայագետների՝ Թորոս Թորամանյանի, Նիկոլայ Տոկարսկու, Բաբկեն Առաքելյանի, Ալեքսանդր Սահինյանի, Մուրադ Հասրաթյանի և այլոց ուշադրությունը: Սակայն մինչ այժմ բազմաթիվ հարցեր դեռևս չեն ստացել իրենց մեկնաբանությունը և նույն խնդրի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Հուշարձանախումբը ժամանակին զբաղեցրել է բավականին ընդարձակ տարածք և շրջափակված է եղել պարսպով: Այժմ պատմական տարածքի վրա բնակելի տներ, բակեր և տնամերձ այգիներ են: Անխաթար պահպանվել է լոկ արքայական դամբարանի մերձակա հատվածը: Այստեղ հստակ դիտվում են հյուսիսից հարավ ձգվող երեք առանցքային շինություններ՝ եկեղեցին, արքաների դամբարանը և ժամանակին կոթողով ու թևավոր խաչով զարդարված հուշասյան գետնախարսխի ավերակները: Շրջապարսպի ներսի մյուս շինությունները դարերի ընթացքում ավերվել են և ծածկվել մշակութային հզոր շերտով: Մյուս կարևոր ակնկալիքն այն է, որ ըստ պատմիչների վկայության երանելի Մեսրոպ Մաշտոցը հայոց այբուբենի գյուտից անմիջապես հետո Արագածոտնում, այդ թվում նաև՝ Աղձք գյուղում հիմնել է **առաջին հայկական դպրոցները**: Հետրաբար պեղումները կարող են բացահայտել հայոց հնագույն ուսումնական հաստատությունը: Հանրահայտ է, որ հայոց արքաների մասունքների ամփոփման վայրը պետք է որ լիներ պաշտամունքի կենտրոն, որտեղ հավանաբար գործել է ստվար հոգևորական դաս, եղել են հոգևոր գործունեության և

կեցության այլ շինություններ: Պեղումները նպատակ ունեն բացահայտելու այն պատմաճարտարապետական միջավայրը, որի առանցքում եղել է հայոց արքաների դամբարանը: Աղձքի հուշարձանախումբը բացառիկ է նաև հայ վաղ միջնադարյան արվեստի բացահայտման և լուսաբանման տեսանկյունից: Այստեղ առկա են հազվագյուտ վաղ քրիստոնեական պատկերաքանդակներ Աստվածաշնչյան թեմաներով, ինչպես նաև նախաքրիստոնեական հարթաքանդակներ, այդ թվում նաև՝ Հայկ Նահապետի կռիվը հսկայական վարազի դեմ: Բացառիկ արժեքավոր են նաև գիշատիչ գազանների, արծիվների, կենաց ծառերի, ընտանի և որսի կենդանիների հարթաքանդակներով թրծակավե սալիկները, որոնք պատրաստված են մեծ վարպետությամբ և խնամքով: Խիստ հավանական է, որ հետագա պեղումները էապես կհամալրեն Հայաստանի վաղ միջնադարյան արվեստի մասին մեր պատկերացումները: Հնարավոր է, որ արծվի հարթաքանդակը եղել է հայ Արշակունիների զինանշանը:

2) Ծրագրով նախատեսվող գործողություններ.

ա. 2014 թ. ՀՀ ազգային ժողովում հարց էր բարձրացվել Աղձքի հայոց արքաների դամբարանի հրատապ բարեկարգման և թանգարանացման վերաբերյալ: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ որոշվեց սկզբնական փուլում իրականացնել հուշարձանների պեղման աշխատանքները, որոնք սկսվել են 2015 թ. և շարունակվելու են առնվազն 3 տարի: Ծրագիրն իրականացնում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

բ. Պեղումներն ընդգրկելու են հուշարձանի պահպանված հատվածի ողջ տարածքը, որն զբաղեցնում է շուրջ 0.5 հա: Նկատի ունենալով այն, որ հայոց արքաների դամբարանի հատակը ժամանակակից գետնի մակերեսից գտնվում է առնվազն 1.5-3 մ խորությամբ, և այն տեսակետը, որ դամբարանը կառուցվել է հելլենիստական կամ նույնիսկ ուրարտական ամրոցի տարածքում, կարելի է եզրակացնել, որ մշակութային շերտերի հզորությունը հիմնական հատվածում առնվազն 2-3 մ է: Այսինքն՝ որոշակի է, որ նախատեսվում է երկարատև և բարդ

աշխատանք, որի տևողությունը նախնական հաշվարկներով կարող է տևել մի քանի տարի: Ծրագրի առաջին փուլի՝ պեղումների իրականացման համար անհրաժեշտ է նվազագույնը երեք տարի: Չի բացառվում, որ պեղումների համար պահանջվի ավելի երկար ժամանակ, եթե նախատեսված մշակութային հորիզոնները լինեն ավելի հզոր և ընդգրկեն ոչ միայն վաղ միջնադարյան, այլև հելլենիստական ժամանակաշրջանի շերտերը:

գ. Տեղում սփռված են ավերված կառույցների բազմաթիվ որմնաքարեր, կոթողների, տապանաքարերի, սարկոֆագների, արձանագրությունների, խոյակների, խարիսխների և խաչքարերի բեկորներ: Անհրաժեշտ է դրանք համարակալել, դասակարգել, խմբավորել ըստ տիպերի, նկարագրել և չափագրել՝ վավերագրված կոթողները՝ խաչքարերը, արձանագրությունները, քառակող կոթողները հետագայում վերականգնելու, իսկ որմնաքարերը հնարավոր վերակազմությունների և բարեկարգումների նպատակով օգտագործելու նպատակով: Այսինքն՝ հրատապ է այս հուշաքարերի ալբոմի կազմումը՝ հետագա վերականգնումներում դրանք օգտագործելու և թանգարանացնելու համար:

դ. Նկատի ունենալով այն հանգամանքը, որը Աղձքի հայոց արքաների դամբարանը եղել և մնում է զբոսաշրջության կարևոր կենտրոն, նախատեսվում է պեղումները կազմակերպել այնպես, որ պեղված անմշակ քարերը հողը մաղելուց անմիջապես հետո տեխնիկայով տեղափոխվեն գյուղից դուրս:

ե. Դաշտային հետազոտությունները հիմք կհանդիսանան, որպեսզի պեղված հուշարձանը վերականգնվի և բարեկարգվի, դառնա Հայաստանի ուխտագնացության և զբոսաշրջության առանցքային վայրերից մեկը: Կատարված գիտահետազոտական աշխատանքները հիմք կհանդիսանան, որպեսզի նախապատրաստվի մենագրություն Աղձքի հայոց արքաների դամբարանի վերաբերյալ:

47. «Պատմամշակութային անշարժ հուշարձանների և հատուկ պահպանվող տարածքների հետախուզման և հնագիտական պեղման տեղեկատվական շտեմարան-տեղեկագրքի» ստեղծում

Շուրջ 150 տարվա հնագիտական հուշարձանների վերաբերյալ տեղեկույթը, պեղումների արդյունքներն առ այսօր ամփոփ չեն ներկայացվել հանրությանը: Շտեմարան-տեղեկագրքի ստեղծումը կարելի է համարել հայ հնագիտության հեռանկարային զարգացման նախապայման: Ծրագրի նպատակն է ի մի բերել ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ ողջ լեռնաշխարհում XIX-XX դարերին և մեր օրերում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների հիմնական արդյունքները և հնագիտական հուշարձանների, բնագավառի օրենսդրության, բնագավառի կազմակերպությունների վերաբերյալ ամփոփ տեղեկույթը: Շտեմարան-տեղեկագիրքը հնարավորություն կընձեռի դյուրացնելու հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության ստացումը և կնպաստի հուշարձանների հանրահռչակմանը:

48. «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում: Նվաճումներ և հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովի և ընթացիկ պեղումների արդյունքների ժամանակավոր ցուցադրության պարբերաբար (2 տարին մեկ) կազմակերպման ենթածրագրի իրականացում

1) Վերջին տարիներին Թուրքիայի կառավարության, մշակույթի նախարարության հովանավորությամբ և օժանդակությամբ տարին մի քանի անգամ կազմակերպ-վում են միջազգային հնագիտական համաժողովներ և գիտաժողովներ, որտեղ ի թիվս այլ հարցերի ներկայացվում են նաև Հայկական լեռնաշխարհի՝ ՀՀ սահմաններից դուրս ընկած տարածքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Վրաստանում նույնպես տարին մեկ-երկու անգամ պարտադիր կազմակերպվում է տարածաշրջանի հնագիտությանը նվիրված գիտաժողով: Հայաստանում նման գիտաժողովների կազմակերպումը հարկ է դիտարկել որպես պարտադրված և հույժ կարևոր միջոցառում:

2) 2017 թ. նպատակահարմար է հրավիրել միջազգային հնագիտական գիտաժողով՝ «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում: Նվաճումներ և հեռանկարներ 2» խորագրով (առաջին գիտաժողովը հրավիրվել է

2009 թվականին): Առաջարկվող վերնագրով շեշտվում է, որ Հայաստանում կազմակերպվող հնագիտական միջազգային գիտաժողովը լինելու է շարունակական: Գիտաժողովի նպատակն է ներկայացնել Հայկական լեռնաշխարհի սահմաններում և հարակից տարածքներում վերջին տարիներին կատարված հնագիտական հետազոտությունների արդյունքները, քննարկել տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրության ոլորտում կուտակված հիմնախնդիրներին վերաբերող, միջազգային համատեղ ծրագրերի ընդլայնման և խորացման, հնագիտական հուշարձանների պահպանությանը և հանրահռչակմանն առնչվող, մշակութային ժառանգության ինքնության աղճատման դեմ պայքարի անհրաժեշտության հետ կապված հարցերը:

3) Գիտաժողովին կհրավիրվեն 30 մասնագետներ՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, ԳԴՀ-ի, Իտալիայի, Ավստրիայի գիտական հաստատությունների այն գիտնականները, որոնք համատեղ ծրագրեր են իրականացնում Հայաստանում և հարևան երկրներում: Միաժամանակ կհրավիրվեն գիտնականներ ՌԴ-ից, Վրաստանից, Իրանից, Թուրքիայից, Իսրայելից, Ճապոնիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Հունգարիայից և այլ երկրներից: Գիտաժողովի կազմակերպիչ և պատասխանատու կհանդիսանան ՀՀ մշակույթի նախարարությունը և ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը:

4) Գիտաժողովը կուղեկցվի «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում: Նվաճումներ և հեռանկարներ» EXPO-ով՝ ընթացիկ պեղումների արդյունքների ժամանակավոր ցուցադրության կազմակերպմամբ:

5) Գիտաժողով և EXPO ձևաչափով ընթացիկ հնագիտական ծրագրերի արդյունքների ներկայացման, հանրահռչակման քաղաքականությունը վերջին տարիներին է քաղաքացիություն ստացել և մշակութային ժառանգության հանրահռչակմանը, գիտական արժևորմանը միտված պետական քաղաքակա-նության ցուցադրման և իրականացման լավագույն ձևերից մեկն է:

49. «Հայաստանի հնագիտական ժառանգություն. հնագիտական տեղեկատվական համակարգ՝ AIS» ենթածրագրի իրականացում

1) Առաջարկվող ծրագրում հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2008 թվականի ծրագրի դրույթներն ու պահանջները, հայագիտության զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հնագիտության, պատմամշակութային ժառանգության պահպանության, հանրահռչակման, օգտագործման ոլորտներում համաշխարհային զարգացումների միտումները, հնագիտական հաստատությունների կադրային ներուժը, ներհանրապետական և միջազգային գիտական համագործակցության հնարավորությունները: Ժամանակակից հայագիտության և հատկապես հնագիտության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն է: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հնագիտական ուսումնասիրություններում որակապես նոր մակարդակ ապահովելու համար սկզբունքային նշանակություն ունի հնագիտական հուշարձանների, հայտնաբերված նյութերի (հնագիտական սկզբնաղբյուրների), դրանց ուսումնասիրության արդյունքների թվանշանացումն ու տվյալների շտեմարանի ստեղծումը: Այդ են վկայում Եվրոպայի տարբեր հնագիտական կենտրոններում կյանքի կոչված ASPRO, ArchAtlas և բազմաթիվ այլ ծրագրերը, որոնց արդյունքները կիրառվում են ոչ միայն հնագիտության, հին աշխարհի պատմության և աշխարհագրության ուսումնասիրություններում, այլև համաշխարհային հնագիտական ժառանգության հաշվառման, զբոսաշրջային ուղեցույցների կազմման ոլորտներում:

2) Ծրագրի նպատակը

Առաջադրվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել հայոց հնագույն, հին և միջնադարյան մշակութային ժառանգության նկարագրության, դասակարգման, բնութագրության, հատկանիշների ձևաբանեցման և, ըստ այդմ, գույքագրման մի համակարգ, որի հիմքի վրա կստեղծվի թվանշանացված՝ **տվյալների համահավաք շտեմարան, տեղեկատվության որոնողական-համադրական համակարգ, «Հայաստանի հնագիտական ժառանգություն»**

ինտերնետային կայքը և ինտերնետային ամսագիրը (հայերեն և անգլերեն), Հայաստանի հնագիտական քարտեզը:

3) Ծրագրի իրականացման մեթոդներն ու մեթոդաբանությունը

ա. Տվյալների շտեմարան ստեղծելու համար հնագիտական ժառանգության անշարժ և շարժական օբյեկտները (սկզբնաղբյուրները) կհամակարգվեն և կթվանշանացվեն՝ **ըստ դարաշրջանների, հնագիտական մշակույթների և մշակութաժամանակագրական խմբերի, վարչատարածքային շրջանների, հուշարձանների, գտածոների կատեգորիաների, սեպագիր և վիմագիր տվյալների, մասնագիտական գրականության, գտածոների պահպանության վայրի:**

բ. Տվյալների շտեմարանի և տեղեկատվության որոնողական-համադրական համակարգի համար մեթոդական հիմք են ծառայելու GIS (Geographic information System) համակարգչային ծրագրերի չափորոշիչներն ու սկզբունքները: Այս մոտեցումը հնարավորություն կտա հայոց հնագույն, հին և միջնադարյան մշակութային միջավայրը բնութագրել և վերլուծության ենթարկել էկոլոգիական միջավայրի, գեոդինամիկ գործընթացների, ռելիեֆի առանձնահատկությունների, ջրաբաշխական համակարգի, ճանապարհային ցանցի, հանքային ռեսուրսների, բնակեցման տարածքի յուրացման և կազմակերպման առանձնահատկությունների և բազմաթիվ այլ պարամետրերի հաշվառմամբ:

գ. Նկարագրվող, դասդասվող և բնութագրվող յուրաքանչյուր օբյեկտ կներկայացվի համապատասխան լուսանկարով, չափագրությամբ, առկա անալիզների տվյալներով և այլն:

4) Ծրագրում ընդգրկվող մասնագետներ

ա. գիտահետազոտական խումբ՝ 9 մարդ (հնագետ՝ 3, ծրագրավորող՝ 1, GIS ծրագրի մասնագետ՝ 1, մուտքագրող օպերատորներ՝ 2, ճարտարապետ՝ 1, լուսանկարիչ՝ 1):

բ. տեքստերի, ճարտարապետական չափագրումների հեղինակներ, գրչանկարողներ՝ աշխատանքներին մասնակցում են պայմանագրային հիմունքներով՝

հուշարձանների կամ գտածոների նկարագրության, բնութագրության համար անհրաժեշտ տեքստեր կազմելու և չափագրումներ կատարելու պատվերով:

5) Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ

ա. Թվային լուսանկարչական ապարատ և պիտույքներ (Nikon D80 + օբյեկտիվ Nikkor 18135 мм + Nikon Speedlight SB800 + Nikon Battery pack)՝ 2 հատ,

բ. լուսանկարչական ապարատից DVD գրանցելու սարք՝ 1 հատ,

գ. թվային տեսախցիկ (JVC GZHD7, HDD 60Gb/S, 1920 x 1080)՝ 2 հատ,

դ. տեսաձայնագրությունների մշակման կարողություններ ունեցող համակարգի (CPU Yorkfield quadro + monitor + ups)՝ 2 հատ,

ե. գունավոր լազերային տպիչ (Xerox Phaser 6360 series)՝ 1 հատ,

զ. VHS վիդեոժապավենների թվայնացման և DVD մոնտաժի համակարգչային սարք (Pinnacle Systems Avid Liquid 7 Pro)՝ 1 հատ,

է. համակարգչային արտաքին հիշողություն (Western Digital Passport 320GB)՝ 2 հատ,

ը. ֆոտո նեգատիվների և սլայդների սքաներ (Microtek ArtixScan 120TF Microtek ArtixScan 120TF)՝ 1 հատ:

6) Ծրագրի իրագործման շնորհիվ գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող մոտեցումներով և սկզբունքներով կստեղծվի Հայաստանի հնագիտական ժառանգության համահավաք դիվանը՝ հագեցած տվյալների, նյութերի որոնողական ծրագրերով: Կստեղծվի Հայաստանի Հանրապետության հնագիտական քարտեզը: Հնագիտական տեղեկատվական այս համակարգ ստեղծմամբ առաջին անգամ հայ իրականության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառվելու են որպես գործիք՝ պատմամշակութային ժառանգության ռեսուրսները օպերատիվ կառավարելու և օգտագործելու համար: Հնագիտական տեղեկատվական համակարգի հիմնական առավելությունն այն է, որ ունի գիտական արժեք, կիրառելի է տարբեր ոլորտների համար՝ կառավարման համակարգ, մշակութային քաղաքականության, զբոսաշրջության, գիտության և կրթության ոլորտներ:

7) Ստացված արդյունքները կարող են կիրառվել մի շարք առումներով.

ա. գիտության տարբեր ոլորտներում ուսումնասիրությունների համար: Համահավաքում ամբարվող նյութերն ու տվյալները հնագիտական ուսումնասիրություններից բացի, ելակետային նշանակություն ունեն հայոց հնագույն և հին՝ պատմության, ճարտարապետության, արվեստի պատմության, վիմագրության և սեպագրության, մարդաբանության, կրոնի, ծիսակարգի, արտադրական տեխնոլոգիաների, լեռնաշխարհում էկոլոգիական միջավայրի ձևավորման պատմության և այլ գիտակարգերի շրջանակներում իրականացվող հետազոտությունների համար,

բ. հուշարձանների պահպանության և օգտագործման ոլորտում: Ծրագրի իրականացումն ինքնին ենթադրում է հուշարձանների գույքագրում, ներկայիս վիճակի և տեղեկատվական պոտենցիալի գնահատում, սահմանների ճշգրտում, ինչը նպաստելու է պատմամշակութային հուշարձանների ցանկերում ընդգրկված հնագիտական օբյեկտների հաշվառմանը, գիտական նկարագրությանը, պահպանական գոտիների կազմմանը,

գ. թանգարաններում պահվող նյութերի գիտական նկարագրության, թեմատիկ ցուցադրությունների կազմակերպման, շարժական մշակութային արժեքների գույքագրման և արժեքավորման չափորոշիչների հստակեցման աշխատանքներում,

դ. զբոսաշրջության ոլորտում ծրագրի իրականացումն ինքնին ենթադրում է հուշարձանների տեղադրության, պատմության, բնույթի, մշակութային համատեքստի, ժամանակագրության և այլ տիպի տեղեկատվություն, որը կարող է հիմք ծառայել գիտականորեն հիմնավորված տուրիստական երթուղիների, տուրիստական ուղեցույցների մշակման համար,

ե. հավաքված նյութերը կարող են օգտագործվել բուհական և դպրոցական ուսումնական ծրագրերում և կարող են դառնալ հայոց պատմամշակութային ժառանգության քարոզման, հանրահռչակման և միջազգային ճանաչման գիտական աղբյուրականության, զբոսաշրջության, գիտության և կրթության ոլորտների համար լավագույն հենք:

50. Հնագիտական հետազոտությունների ենթակառուցվածքների կազմավորում և թարմացում: **Ուրարտագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծում.**

1) Արդեն մեկ հարյուրամյակից ավելի է, ինչ արևմուտքի բազմաթիվ արևելագիտական կենտրոններ և խոշոր թանգարաններ զբաղվում են Վանի թագավորության (Ուրարտուի) պատմության և մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրներով: Անցած տասնամյակների ընթացքում բազմաթիվ լեզուներով հրատարակվել են հարյուրավոր հոդվածներ ու մենագրություններ այդ հիմնահարցերի վերաբերյալ: Ըստ որում՝ դրանց առավել տեղեկատվական ու գիտական առումով կարևոր մասը շրջանառության մեջ է մտել XX դարի II կեսին, այն ժամանակ, երբ գործում էին նշանավոր արևելագետներ Բ. Պիոտրովսկին, Ի. Դյակոնովը, Գ. Մելիքիշվիլին, Յ. Ֆրիդրիխը, Ռ. Բարնետը, Ք. Բըռնին, Վ. Կլեյսը, Ք. Մաքսուել-Հիսլոփը, Հ. Հաուպտմանը, Պ. Քալմայերը, Մ. Վան-Լունը, Լ. Վանդեն-Բերգեն, Գ. Գրոպպը, Մ. Սալվինին, Պ. Զիմանսկին, Ն. Հարությունյանը, Հ. Մարտիրոսյանը, Գ. Տիրացյանը, Ս. Եսայանը և այլոք: Հիշյալ նշանավոր արևելագետների, հնագետների ու պատմաբանների հետազոտությունների շնորհիվ ուրարտագիտությունը դարձել է Մերձավոր Արևելքի վաղ շրջանի պատմության ու մշակույթի առավել պահանջված ու արդյունավետ ուսումնասիրվող ոլորտներից մեկը: Վանի թագավորության (Ուրարտուի) էթնոմշակութային գործընթացների ուսումնասիրության ուղղությամբ բավական ակտիվացել են թուրք արևելագետների ու հնագետների գիտական հետաքրքրությունները: Դրանցից Է. Ակուրգալը, Ա. Էրցենը, Ա. Դինչոլը, Օ. Թաշիյուրեքը, Վ. Սևինը, Բ. Յոգյունը, Ջ. Իշիքը, Ա. Չիլինգիրօղլուն, Կ. Քյոռօղլուն և այլոք՝ ակտիվորեն համագործակցելով արտասահմանյան (եվրոպական և ամերիկյան) հնագիտական կենտրոնների հետ, որոշակի քանակական, իսկ ժամանակի ընթացքում նաև որակական գերակայություն կարող են ստեղծել այդ ոլորտում: Ինչ վերաբերում է Հայաստանին, որը մշտապես համարվել է ուրարտագիտական հետազոտությունների կարևոր կենտրոն,

առ այսօր ՀՀ ԳԱԱ համակարգի Արևելագիտության, Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտներում չեն գործում Վանի թագավորության (Ուրարտուի) պատմության ու մշակույթի հիմնախնդիրներով զբաղվող առանձին գիտական ստորաբաժանումներ:Հայ մասնագետների հիմնական մասը դասավանդում է պետական և մասնավոր բուհերում: Իրավիճակի զարգացման նման պարագայում, երբ գիտական կազմակերպությունները մեկտեղված չեն, վտանգված է Հայաստանի հնագույն պատմության ու մշակույթի ամենանշանակալի հատվածներից մեկի վերականգնող, ուսումնասիրող, մեկնաբանող, ներկայացնող և հանրահռչակող կողմ հանդիսանալու հնարավորությունը: Այդ կարգավիճակի վերստին ձեռքբերումը կլինի բարդ ու երկարատև: Նկատի ունենալով այս ամենը՝ այսօր առավել քան հրատապ է Հայաստանում Ուրարտագիտության հետազոտությունների կենտրոնի ստեղծումը:

2) Այդ կենտրոնի նորմալ գործունեության համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ է 1500-2000 մ^2 մակերես զբաղեցնող տարածք, որտեղ անհրաժեշտ կլինի տեղաբաշխել հետևյալ ստորաբաժանումները.

ա. Վանի թագավորության ճարտարապետական և պատմամշակութային բոլոր հուշարձանները հաշվառող ու փաստագրավորող բաժին: Այս բաժնի սկզբնական գործունեության համար բավական է 4 գիտաշխատողի հաստիք (ներառյալ նաև բաժնի վարիչը): Այն զբաղվելու է բոլոր ուրարտական հուշարձանների լուսանկարների, չափագրությունների, հանույթների, կտրվածքների, գծանկարների և անհրաժեշտ այլ նյութերի հավաքման, համակարգման ու գիտական մշակման հարցերով:

բ. Ուրարտական սեպագրի ուսումնասիրության և բոլոր արձանագրությունների լուսանկարների, էստամպաժների, արտատպությունների, գծանկար տեքստերի և մասնագիտական ողջ գրականության հավաքման, մշակման ու ուսումնասիրության հարցերով զբաղվող բաժին: Այն սկզբնական շրջանում կարող է ունենալ 4 գիտաշխատող (ներառյալ նաև բաժնի վարիչը):

գ. Վանի թագավորության հնամարդաբանության ու հին շրջանի սոցիալ-ժողովրդագրական վերակազմություններով ու մեկնաբանություններով զբաղվող բաժին: Այն ուսումնասիրելու է Վանի թագավորության (Ուրարտուի) ժամանակաշրջանի մեր նախնիների մարդաբանությունը, նրանց սեռատարիքային առանձնահատկությունները, կյանքն ու հիվանդությունները, կենսակերպը: Ուսումնասիրություններ է իրականացնելու նաև հայ-ուրարտական հնամարդաբանական զուգահեռների, չափագրական և ԴՆԹ-ի մակարդակներում:

դ. Վանի թագավորության հոգևոր մշակույթի, պատկերագրության, առասպելաբանության և ծիսական արարողությունների վերականգնման բաժին:

ե. Վանի թագավորության նյութական մշակույթի ուսումնասիրության բաժին: Այն զբաղվելու է ուրարտական բոլոր հնագիտական հուշարձաններից հայտնաբերված արտեֆակտերի ուսումնասիրությամբ: Անհրաժեշտության դեպքում իրականացնելու է պեղումներ Հայաստանի տարածքում և հնարավորության դեպքում մասնակցելու է նաև Թուրքիայում և Իրանում պեղվող ուրարտական հնավայրերի հետազոտման աշխատանքներին:

զ. Վերականգնման և նյութերի կամերալ մշակման լաբորատորիա: Այստեղ վերականգնվելու, ամրակայվելու և տեխնիկատեխնոլոգիական առումով հետազոտվելու են ուրարտական հնավայրերից հայտնաբերված նյութական մշակույթի արժեքները:

3) Նշված ստորաբաժանումները այն նախնական հիմքն են, ինչի վրա կարող է ձևավորվել և գործել Ուրարտագիտական հետազոտությունների կենտրոնը: Ժամանակի ընթացքում և ֆինանսական առավել բարենպաստ պայմանների դեպքում կենտրոնը կարող է առավել ընդլայնել իր գործունեության ոլորտները:

4) Այդ խնդիրն առավել նպատակահարմար է իրականացնել 1968 թ. գործող և ուրարտագիտության ոլորտում գիտահետազոտական և գիտացուցադրական աշխատանքների որոշակի փորձ ունեցող «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտական հենքի վրա:

5) Այս առումով դեռևս 2008 թ. թանգարանում իրականացվել են վեց երիտասարդ մասնագետների ուրարտական սեպագրի ուսուցման դասընթացները: ՀՀ մշակույթի նախարարության «Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ-ում գործում էր «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտորը», որը Գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրվող ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում տարեկան շուրջ 41.0 մլն դրամ ֆինանսավորման միջոցով իրականացրել էր Արին բերդ, Ծովինար, Մեծամոր, Զորաց քարեր հնագիտական հուշարձանների ուրարտական շերտերի մաքրման, պեղման, ամրակայման և գտածո արտեֆակտերի վերականգնման աշխատանքները: Նույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել ու կազմվել են նաև պատմական Հայաստանի արևմտյան հատվածի (ժամանակակից Թուրքիայի արևելյան շրջանների՝ Այանիս, Վան, Հայկաբերդ-Չավուշթեփե, Այազլի-Դրմերդ, Վերին և Ներքին Անձավներ, Մալաթիա, Կայսերի-Կեսարիա) ուրարտական հուշարձաններին առնչվող վկայագրային և ֆոտո տեղեկագրերը: Հնարավորության սահմաններում արվել են նշված հուշարձանների հանույթներն ու չափագրությունները: Ծրագրի գիտաշխատողները 2012-2014 թթ. շուրջ երեք տասնյակ հոդվածներ ու հաղորդումներ են հրատարակել Հայաստանի և արտերկրի մասնագիտական պարբերականներում: Անշուշտ, «Էրեբունի» թանգարանի հիման վրա ստեղծվելիք Ուրարտագիտական հետազոտությունների կենտրոնի առկայության պարագայում, ՀՀ մշակույթի նախարարության «Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ-ի «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտոր» ենթակառուցվածքը կներառվի ստեղծվելիք նոր գիտական միավորի մեջ:

6) Այս կարևոր խնդրի իրականացման ճանապարհին առաջնահերթ նշանակություն կարող է ունենալ թանգարանի հետնամասում դեռևս 1980-ական թթ. վերջին սկսված և անավարտ թողնված գիտական կենտրոնի կցակառույց շենքի շինարարության վերսկսման ու ավարտման գործընթացը: Այդ կառույցի հիմքերը փորված են, տեղադրված են բետոնե հիմնամասերը, անցկացված է դրենաժային համակարգ, իսկ մոնտաժված կրող կոնստրուկցիաները ներառում են մոտ 700 քմ

տարածք և նախատեսված են երկհարկ շինության համար: Այսինքն կիսակառույցի շինարարական աշխատանքների վերսկսումն ու ավարտն անհամեմատ ավելի քիչ ֆինանսական ծախսեր կպահանջեն, քան նույնատիպ առանձին շենքի կառուցումը, իսկ թանգարանը միանգամից կհամալրվի մոտ 1400 մ^2 օգտակար մակերես ներառող նոր հարմարավետ տարածքով, որտեղ կարելի է նախատեսել աշխատասենյակների, զետեղարանների, արխիվի, գրադարան-ընթերցասրահի, հնագիտական իրերի վերականգնման և հնամարդաբանական նյութերի ուսումնասիրման ու ամրակայման լաբորատորիաների, ֆոտո-, ֆոնո-, տեսա-ֆիլմադարանի և միջոցառումների դահլիճի հատվածներ:

51. «Հուշարձանների վերականգնման տարածաշրջանային կենտրոնի» ստեղծում

1) ՀՀ մշակույթի և Իտալիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների միջև 2011 թ. ապրիլի 6-ին ստորագրվել է **«Աջակցություն հայկական հաստատություններին տեղական մշակութային ժառանգության պահպանության և ամրակայման համար տեխնիկական համաձայնագիրը»,** ինչի շրջանակում Իտալիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհը հնարավորություն ընձեռեց իրականացնել «**Մշակութային ժառանգության պահպանումը Հայաստանում»** համատեղ ծրագիրը: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ՝

ա. Ճարտարապետ - վերականգնողների և շինհրապարակի աշխղեկների վերապատրաստման երկամյա և միամյա՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում: Ընդհանուր առմամբ վերա-պատրաստվել է 56 ուսանող: Դասընթացների ավարտին ուսանողները ստացել են ԵՃՇՊՀ-ի և Միլանի Պոլիտեխնիկի կողմից ճանաչված դիպլոմ:

բ. ***Որմնանկարների վերականգնման մասնագետների պատրաստման, որոնց*** մի մասն անց է կացվել ՀՀ Լոռու մարզի «Քոբայր» վանական համալիրում: Այս դասընթացի շրջանակում վերապատրաստվեց 34 ուսանող:

գ. **«Հնագիտությունը և բազմառարկայական մոտեցումները: Հնագիտական ժառանգության և բնապատկերի արժևորում, պահպանում, տեսություն և պրակտիկա» խորագրով՝** Արուճի վանական համալիրում: Դասընթացին ընդհանուր առմամբ մասնակցեց 43 ուսանող:

դ. ***Թանգարանագիտություն և թանգարանային ցուցադրությունների՝*** թանգարանային գործում արդի մոտեցումների և թանգարանների կառավարման նոր մեթոդների վերաբերյալ Հայաստանի թանգարանային ոլորտի 23 մասնագետների հիմնարար գիտելիքներ հաղորդելու համար: Դասընթացն անդրադարձել է ժամանակակից թանգարանների կառուցվածքին, ցուցադրության կազմակերպման և մեկնաբանման արդի եղանակներին, նոր տեխնոլոգիաների ներդրմանը թանգարաններում, ինչպես նաև LIGHT DESIGN-ի չափանիշներին:

ե. ***Քարե նյութերի վերականգնման՝*** Արուճի և Քոբայր վանական համալիրներում: Մասնակցել են 18 վարպետ ուսանողներ:

զ. ***Խեցեղենի, հնագիտական գտածոների և մետաղյա արտեֆակտների մաքրման և վերականգնման աշխատանքներին նվիրված՝*** «Էրեբունի» պատմա-հնագիտական արգելոց-թանգարանում և ՀՀ ազգային պատկերասրահում:

է. Զուգահեռաբար, ***Արուճի տաճարի ուսումնասիրությունների*** նպատակն է եղել հավաքել անհրաժեշտ տեղեկություններ վերականգնման նախագծի իրականացման համար: Մասնավորապես, իրականացվել է արխիվի և օգտագործված գրականության աղբյուրների ուսումնասիրություն, ճարտարապետական չափագրում, նյութերի և քայքայման ախտորոշում, տեղադրվել են ճեղքաչափեր՝ հնարավոր ճեղքերի բացահայտման և միջավայրի ազդեցությունը որոշելու նպատակով, արվել են կառուցողական բնույթի գնահատումներ և ձայնային ստուգումներ:

2) Հայ-իտալական համատեղ ծրագրի արդյունքում ունեցած ձեռքբերումներից ամենաշոշափելին կարելի է համարել պետական տարբեր կազմակերպությունների

հիմքի վրա մշակութային ժառանգության ***վերականգնման մի շարք լաբորա-տորիաների հիմնադրումն ու զարգացումը:*** Մասնավորապես,

ա. Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանում՝ որմնա-նկարների,

բ. Հայաստանի ազգային պատկերասրահում՝ գեղանկարի,

գ. Հայաստանի պատմության թանգարանում և Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնում հնագիտական առարկաների վերականգնման լաբորատորիաների:

դ. Հայ-իտալական ծրագրի նշանակալի արդյունքը, ձևավորված նյութատեխ-նիկական բազան՝ դրանց հետագա նպատակային օգտագործումը պահանջում են մշակութային ժառանգության պահպանության բնագավառում հայ-իտալական համագործակցության արդյունավետ ավանդույթի շարունակականության ապահո-վում և ինստիտուցիոնալ կառույցի ձևավորում: Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Հայաստանը տարածաշրջանում ակտիվ համագործակցություն է վարում հարևան երկրների հետ՝ հասունացել էր Հայաստանում մշակութային ժառանգության պահպանման և վերականգնման տարածաշրջանային կենտրոն հիմնելու գաղափարը: Կենտրոնն իր գործունեության մեջ կներառի ոչ միայն կրթական, այլև մեթոդաբանական և գործնական բաղադրիչներ, այն պետք է հագե-ցած լինի նորագույն սարքավորումներով, ինչը կնպաստի, մասնավորապես, հուշարձանների վերականգնման լիարժեք նախագծերի մշակմանը, շինարարական որակյալ աշխատանքների իրականացմանը, վերականգնողական դպրոցների (այդ թվում՝ խճանկարի) հիմնադրմանը, որմնանկարների թվայնացման իտալական մեթոդիկայի ներդրմանը և այլն: Նորաստեղծ տարածաշրջանային կենտրոնում հնարավորություն կունենան վերապատրաստվելու Իրանի, Վրաստանի, Սիրիայի մասնագետները: Հայ-իտալական համագործակցության նոր փուլը կնպաստի մասնագիտական համագործակցության ընդլայնմանը, կամրապնդի տարածաշրջա-նում պատմամշակութային ժառանգության պահպանությանն ուղված հեռանկարային զարգացման ծրագրերի մշակմանը, որոնք արդյունավետ կզուգորդվեն

տարածաշրջանում արդեն իսկ իրականացվող ծրագրերի հետ, կենտրոնի ստեղծումը կնպաստի մշակութային զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացմանը, ինստիտուցիոնալ կառույցների ձևավորմանը, ինչը համահունչ կլինի նաև ներկայում Հայաստանում միջազգային կառույցների հետ իրականացվող ծրագրերին

. **3) Նպատակը և կենտրոնի խնդիրները**

ա. ապահովել 2012-2014 թթ. հայ-իտալական ծրագրի շարունակականությունը՝ ամբողջացնելով համատեղ սկսված գործընթացը, հուշարձանների վերականգնման ոլորտում ստեղծելով նոր մասնագիտական ենթակառուցվածք:

բ. Իտալիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ, Հայաստանի Հանրապետությունում առկա ներուժի և միջազգային մասնագետների մասնակցությամբ հուշարձանների պահպանության, ուսումնասիրման, վերականգնման, օգտագործման բնագավառում հիմնել նորագույն սարքավորումներով հագեցած ***Հուշարձանների վերականգնման տարածաշրջանային կենտրոն,***

գ. իրականացնել հուշարձանների վերականգնման ոլորտի այնպիսի ծրագրեր, որոնք չէին ընդգրկվել նախորդ փուլում իրականացված գործընթացներում (հուշարձանների տեխնիկական վիճակի գնահատում, վերականգնման նախագծերի մշակում, որակյալ վերականգնման աշխատանքների իրականացում և այլն),

դ. աջակցել արդեն իսկ ստեղծված նեղ մասնագիտական վերականգնողական դպրոցների պահպանմանը (օրինակ՝ որմնանկարի, քարի նյութի), նպաստել նոր դպրոցների ստեղծմանը (օրինակ՝ խճանկարի),

ե. նպաստել ուսումնասիրություններ, փաստագրումներ կատարող լաբորատորիաների հիմնմանը և ձևավորված այդ ենթակառուցվածքի բազայի վրա մասնագիտական դասընթացների (այդ թվում վերապատրաստման) կազմակերպմանը,

զ. նպաստել հուշարձանների վերականգնման լիարժեք, գիտականորեն համակողմանի հիմնավորված նախագծերի մշակմանը, որակյալ վերականգնողական աշխատանքների իրականացման մշակույթի ձևավորմանը, գոյություն ունեցող կարողությունների զարգացմանը,

է. մշակել հուշարձանների պահպանությանն ուղղված զարգացման հեռանկարային ծրագրեր և նպաստել Հայաստանում միջազգային տարբեր կառույցների հետ արդեն իսկ իրականացվող զարգացման ծրագրերին (Համաշխարհային բանկ, Սմիթսոնյան ինստիտուտ, Եվրոպայի խորհուրդ և այլն),

ը. ստեղծել մասնագիտական համագործակցության հարթակ տարածաշրջանի պետությունների (Իրան, Վրաստան, Սիրիա, Թուրքմենիա, Թուրքիա և այլն) հետ հուշարձանների վերականգնման խնդրներին նվիրված համատեղ ծրագրերի իրականացման համար,

թ. օժանդակել հուշարձանների վերականգնման աշխատանքներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, հստակեցնել այդ աշխատանքներում ավանդական և ժամանակակից մոտեցումների զուգակցման հնարավորությունները, ներդրման ոլորտները,

ժ. կազմել տարբեր երկրներում գտնվող հայկական հուշարձանների պահպանվածության վիճակի մասնագիտական համակողմանի փաստագրմանը վերաբերող տեղեկատվական շտեմարան:

4) Տարածաշրջանային կենտրոնի խնդիրներն են՝

ա. հուշարձանների վերականգնման հիմնախնդիրներին, տարածարջանային և հայոց ավանդական ճարտարապետության հիմնահարցերին նվիրված գիտագործնական պարապմունքների, կոնֆերանսների, մասնագիտական հավաքների, քննարկումների կազմակերպումը,

բ. հուշարձանների վերականգնման հիմնախնդիրներին, հայկական հուշարձանների ուսումնասիրմանը, նախագծմանը, վերականգնմանը, առանցքային և հիմնարար համարվող հուշարձանների, հուշարձան համալիրների, պատմական միջուկ ունեցող բնակավայրերի՝ այդ հատվածների պահպանմանը,

նպատակային օգտագործմանը, կառավարմանը, պատմամշակութային, պատմահնագիտական, պատմաճարտարապետական արգելոցների, արգելոց-թանգարանների հիմնադրմանը նվիրված խորհրդատվության տրամադրումը,

գ. զինված ընդհարումների ընթացքում և դրանից հետո մշակութային արժեքների, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման, ամրակայման, ուսումնասիրության աշխատանքներին մասնակցություն և խորհրդատվություն

դ. հուշարձանների վերականգնման ոլորտին վերաբերող մեթոդական, ելակետային (նաև գնացուցակների), նորմատիվային բնույթի փաստաթղթերի, ձեռնարկների, ուղեցույցերի պատրաստում, տպագրում և տարածում,

ե. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական հուշարձանների ուսումնասիրմանը, նախագծմանը, վերականգնմանը նվիրված ծրագրերի իրականացումը,

զ. առանցքային և հիմնարար համարվող հուշարձանների, հուշարձան համալիրների, հնագիտական վայրերի, պատմական միջուկ ունեցող բնակավայրերի այդ հատվածների պահպանմանը, նպատակային օգտագործմանը, կառավարմանը, պատմամշակութային, պատմահնագիտական, պատմաճարտարապետական արգելոցների, արգելոց-թանգարանների հիմնադրմանը վերաբերող հայեցակարգային փաթեթների պատրաստումը, նախագծումը դրանց իրականացման աշխատանքների կազմակերպումը,

է. հուշարձանների վերականգնման, ամրակայման, նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաթեթների պատրաստումը, պատրաստի փաթեթ-ների փորձաքննության իրականացումը,

ը. հուշարձանների վերականգնման ոլորտում հրատապ պահանջարկ ունեցող քարգործ վարպետների. խճանկար, որմնանկար վերականգնողների և վերականգնման աշխատանքներում ներգրավված այլ մասնագետների մասնա-գիտական ուսուցման կազմակերպումը և նրանց համար համապատասխան աշխատատեղերի ստեղծումը,

թ. հուշարձանների վերականգնման և ուսումնասիրման խնդիրներով հետաքրքրված արտերկրի (նաև սփյուռքահայ) երիտասարդների համար՝ ըստ մասնագիտական նախասիրությունների ամառային դպրոցների, ճամբարների կազմակերպումը,

ժ. հուշարձանների վերականգնման բնագավառում կուտակված գիտելիքների և հմտությունների փոխանցման մեխանիզմների հաստատումը (ուսուցում-աշխատանքային պրակտիկա), գիտելիքների և հմտությունների փոխանցման գործընթացի անընդհատության ապահովումը:

5) Արդյունքները

ա. Ծրագրի արդյունքում կստեղծվի մի կենտրոն՝ նոր ենթակառուցվածք, որի գործունեությունը կկրի շարունակական բնույթ և որը ծրագրի շրջանակում ձևավորված իր նյութատեխնիկական բազայով և կադրային հագեցվածությամբ կշարունակի նախորդ տարիներին սկսած գործընթացները, իր վրա կվերցնի հուշարձանների վերականգնման բնագավառին վերաբերող մի շարք գործառույթների կատարման պարտականությունները:

բ. Կապահովվի կադրային ռեսուրսների պատրաստման, վերապատրաստման, նեղ մասնագիտությունների համար կրթական, գիտագործնական միջավայրի կայացման, երիտասարդների, կանանց, սահմանափակ կարողություններով մարդկանց հուշարձանների վերականգնման, ուսումնասիրության գործընթացներին ներգրավման շարունակականությունը,

գ. Երկարաժամկետ համագործակցության հարթակ կձևավորվի վերականգնված, նորովի վերաիմաստավորված հուշարձանների հենքով կամ հուշարձանների շուրջը ստեղծվող ենթակառուցվածքների կառուցման ու այդ ենթակառուցվածքները սպասարկող անձնակազմի պատրաստման, տեղական տնտեսության, զբոսաշրջության զարգացման հիմնահարցերով զբաղվող կառույցների՝ Հանաշխարհային բանկ, Սմիթսոնյան ինստիտուտ և այլ շահագրգիռ մարմինների հետ: Գործընթաց, որը կխթանի այն համայնքների տնտեսության զարգացմանն ու ակտիվացմանը, որտեղ տեղակայված են վերականգնվող

հուշարձանները կամ մշակութային օբյեկտները: Այս պարագայում լիովին ապահովվում է ոչ միայն մշակութային օբյեկտի բարձրորակ և գիտական վերականգնումը, այլև դրանք դիտարկվում են որպես տարածաշրջանի կայուն զարգացման տնտեսական ռեսուրս:

դ. Տարածաշրջանային համագործակցության մասնագիտացված հարթակի ստեղծում, որում ներգրավված կլինեն փոխադարձ հետաքրքրություններ ունեցող պետությունները՝ Վրաստանը, Իրանը, Սիրիան, Թուրքմենիան, Ռուսաստան, Լիբանանը. Թուրքիան և այլն:

52. «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրացված մասնաշենքի վերանորոգման և հնագիտական գտածոների վերականգնման լաբորատորիայի ստեղծման ծրագիր.

1) Թաիրովի 9 մասնաշենքը կառուցվել է 1938 թ., որպես կոմունալ բնակելի տուն: 1988-90 թթ. մասնակի վերանորոգումից հետո, վերափոխվել է որպես գիտահետազոտական կենտրոնի մասնաշենք: Շենքն այժմ գտնվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության վիճակում և բավարար պայմաններ չի ապահովում գիտահետազոտական հիմնարկի բնականոն գործունեության համար:

2) Մասնաշենքում անհրաժեշտ է կատարել հիմնականում հետևյալ վերանորոգման աշխատանքները. ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրասնուցման ցանցերի, սանհանգույցների վերանորոգում, փայտյա հին դռների և պատուհանների փոխարինում, հատակների վերանորոգում, ներքին հարդարման աշխատանքներ, առաջին հարկի ջեռուցման խնդիրների կարգավորում:

3) ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 3-Ն որոշմամբ ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին վերապահվել են մի շարք նոր գործառույթներ, որոնք հնարավորություն են ստեղծել իրականացնելու պատմամշակութային շարժական և անշարժ հուշարձանների նյութաբանական, մարդաբանական և հնէաբանական լաբորատոր հետազոտություններ ու վերականգնելու հնագիտական գտածոները,

ինչպես նաև իրականացնել պատմամշակութային, մշակութաբանական և հնագիտական փորձաքննություններ: Վերոհիշյալ գործառույթների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան լաբորատորիա և տարածք:

53. Հնագիտական վայրերի հեռանկարային զարգացման ծրագրերի և կառավարման պլանների մշակման աշխատանքներ.

1) Ծրագրում ընդգրկված հնագիտական վայրերում և հուշարձաններում նախատեսված աշխատանքներին զուգընթաց նախատեսվում է կազմել հեռանկարային զարգացման ծրագրեր, որոնց հիմքի վրա կմշակվեն նաև համաշխարհային պրակտիկայում հայտնի հուշարձանների կառավարման պլաններ: Հեռանկարային զարգացման ծրագրերն իրենց մեջ կներառեն՝

ա. պատմական տեղեկություններ հնագիտական վայրի/հուշարձանի,

բ. հուշարձանի տարածքում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների,

գ. հնագիտական գտածոների պահպանությանն ու հաշվառմանն ուղղված աշխատանքների,

դ. հնագիտական վայրերի հանրահռչակմանն ուղղված աշխատանքների,

ե. տարածքների օգտագործման և զբոսաշրջության զարգացմանը միտված աշխատանքների վերաբերյալ տեղեկույթ:

2) Ակնկալվում է մշակել նաև հնագիտական վայրերի կառավարման պլաններ, որոնք իրենց մեջ կներառեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա. հնագիտական վայրի և պատմական միջավայրի պահպանության իրավական հիմքերը (կոնվենցիաներ, միջազգային պայմանագրեր, օրենքներ, կարգեր, հրամանագրեր, որոշումներ և այլ իրավական ակտեր,

բ. հնագիտական վայրի և պատմական միջավայրի պահպանության տեսլականը,

գ. պահպանության նպատակները, պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, չափորոշիչները, գործողությունների ուղեցույցը,

դ. կառավարման համակարգը,

ե. հավելվածներ (պահպանական գոտիներ, կառուցապատման կարգավորման գոտիների, վերականգնման, ամրակայման, բարեկարգման նախագծեր և այլն):

54. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող երկրագիտական թանգարանների նոր մշտական ցուցադրությունների հայեցակարգերի մշակում.

1) Ծրագրում ընդգրկված միջոցառումների շարքում մեծապես կարևորվում է նաև հնագիտական գտածոների վերականգնման և թանգարանացման աշխատանքները: Յուրաքանչյուր մարզում իրականացվող պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական գտածոները նախատեսվում է թանգարանացնել տեղում կամ հանձնել մարզի տարածքում գործող երկրագիտական թանգարաններին: Բնագավառի հեռանկարային խնդիրներից է նաև հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի և գտածոների վերականգնման կենտրոնների ստեղծումը:

2) Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության մարզերում գտնվող երկրագիտական թանգարանների համար մշակել նոր մշտական ցուցադրությունների հայեցակարգեր՝

ա. Գեղարքունիքի երկրագիտական թանգարան,

բ. Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան,

գ. Հրազդանի երկրագիտական թանգարան,

դ. Շիրակի երկրագիտական թանգարան,

ե. Գորիսի երկրագիտական թանգարան,

զ. Կապանի երկրագիտական թանգարան,

է. Եղեգնաձորի երկրագիտական թանգարան,

ը. Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահ,

թ. Իջևանի պատմա-երկրագիտական թանգարան:

3) Միջոցառման նպատակը հնագիտական պեղումների արդյունքների նորովի ներկայացումն ու հանրահռչակումն է, ինչպես նաև երկրագիտական թանգարան-ների ցուցադրությունների արդիականացումը և այցելուների թվի աճը:

4) Որպես պիլոտային ծրագիր կհանդիսանա Դիլիջանի երկրագիտական թան-գարան-պատկերասրահ:

55. Ամառային հնագիտական ճամբարների կազմակերպում.

1) Հնագիտական ամառային կամավորական ճամբարների կազմակերպումը ընդունված և շատ արդյունավետ փորձ է դարձել մի շարք եվրոպական երկրներում երիտասարդների շրջանում ոչ ֆորմալ կրթության միջոցով պրակտիկ գիտելիքներ, նոր ծանոթություններ ձեռք բերելու, միջմշակութային հաղորդակցության և կամավորական աշխատանքի մեջ ներգրավելու համար: Նման ճամբարները սովորաբար կազմակերպվում են ամռան ամիսներին, քանի որ մասնակիցները ուսանողներ և երիտասարդ մասնագետներ են, ովքեր այդ շրջանում կազմակերպում են իրենց արձակուրդները: Մասնակիցների կազմը բազմազան է, քանի որ ճամբարի հրավերը բաց է բոլոր երկրների համար: Ճամբարի տևողությունը կլինի 2 շաբաթ, իսկ մասնակիցների նախընտրելի քանակը 12-15 հոգի: Ճանապարհածախսը կհոգան մասնակիցները: Ճամբարին մասնակցելու համար կսահմանվի նաև անդամավճար (միջազգային փորձում յուրաքանչյուր հրավիրող կողմ ինքն է սահմանում գումարի չափը, սակայն միջինացված այն չի գերազանցի 300 եվրոն): Վարձավճարը կսահմանվի նաև՝ հաշվի առնելով թիրախային խմբերը /ուսանողներ, երիտասարդ գիտնականներ և այլն/:

2) Ճամբարը կներառի մի քանի բաղադրիչներ. այն կունենա տեսական դասընթացներ, որոնք սովորաբար կրում են ոչ ֆորմալ բնույթ (թրեյնինգ, քննարկումներ, պրեզենտացիաներ): Բուն աշխատանքային հատվածը (պեղումների մասնակցություն), ինչը չպետք է գերազանցի 6-7 ժամը օրական: Մասնակիցների համար կկազմակերպվի նաև օրվա մյուս հատվածը՝ ներառյալ այցելություններ տարբեր տեսարժան վայրեր, մշակութային երեկոների կազմակերպում և այլն:

3) Ամառային կամավորական հնագիտական ճամբարները կնպաստեն՝

ա. երիտասարդների ներգրավվմանը և միջմշակութային հաղորդակցությանը,

բ. մշակութային ժառանգության հանրահռչակմանը,

գ. զբոսաշրջության զարգացմանը,

դ. միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնմանը:

56. Հնագիտական զբոսաշրջության ցուցահանդես-տոնավաճառների կազմակերպում

Ծրագրի շրջանակում նախատեսվում է տարբեր երկրների հնագիտական զբոսաշրջության ընկերությունների մասնակցությամբ Հայաստանում կազմակերպել հնագիտական ցուցահանդես-տոնավաճառներ: Համապատասխան տաղավարնե-րում կներկայացվեն մասնակից երկրների հնագիտական ժառանգությունը, բնագավառում հրատարակված գիտական աշխատություններն ու զբոսաշրջության զարգացմանը նպաստող նյութերը (հուշանվերներ, բուկլետներ, գրքեր և այլն), ինչպես նաև հնագիտական զբոսաշրջության բնագավառում կայանալիք միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական նյութեր:

IV. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

57. Ծրագրի ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի մշտադիտարկման և գնահատման իրականացմանն ու դրա արդյունքների համակողմանի և լիարժեք վերլուծության վրա: Մշտադիտարկումը պետք ուղղված լինի սույն ծրագրի իրականացման միջոցառումների արդյունավետության գնահատմանը, դրանց իրականացման ընթացքում ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումներին:

V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

58. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

59. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ պետական և համայնքների բյուջեները, մասնավոր հատվածի ներդրումները և նպատակային նվիրատվությունները, օրենքով չարգելված այլ աղբյուրները: Ծրագրի միջոցառումների իրականացման համար պետական աջակցության մասով ֆինանսավորումը կարող է նախատեսվել յուրաքանչյուր բյուջետային տարիների համար համապատասխան ոլորտների գծով պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով և պետական բյուջեներով սահմանվող ծախսերի սահմանաչափերի շրջանակներում՝ ելնելով ծախսային առաջնահերթություններից:

VII. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

60. Հայաստանի Հանրապետությունում հնագիտության բնագավառի զարգացման և հանրահռչակմանը միջոցառումների ծրագրի (2017-2025 թթ.) ընդունմամբ միասնականորեն կիրականացվեն համալիր միջոցառումներ, որի արդյունքում ակնկալվում է իրավական հիմքերի ապահովում, հնագիտական հուշարձանների նախապատրաստում զբոսաշրջության համար, հնագիտական ժառանգության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, հուշարձանների կառավարման պլանների մշակում, ծրագրում ընդգրկված հուշարձանների պահպանական գոտիների կազմում կամ լրամշակում, հնագիտական գտածոների վերականգնում և թանգարանացում, երկրագիտական թանգարանների նոր մշտական ցուցադրությունների հայեցակարգերի մշակում, ծրագրում ընդգրկված հուշարձանների առավել արդյունավետ ներգրավում զբոսաշրջային փաթեթներում և երթուղիներում, ինչպես նաև զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում:



Քարտեզ 1. 2010-2014 թթ. պեղված հուշարձանները (միջազգային համագործակցությամբ իրականացվող համատեղ պեղումները և ուսումնասիրությունները ներկայացված են համապատասխան դրոշներով):